


3131



2010

N 855
491. 99-5

m-45

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

S C R E R F L

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Ա. ՇԽԱ. Ս. Ս. Ս. Բ. Ե. Ց

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԵՐ-ՂԵՂՈՆԴԵԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մայմես Վարդան
Տիպ. Մ. Վարդանյան, Տրոյց. թիվ
1891

ՍԻ ԵՐԿՐՈՒ ԽԸՆՔ

Ընթերցողը կը նկատէ, որ քերականութեան սոյն տեսրակը սերտ կապ ունի նախընթաց տեսրակի հետ, որ սա նորա պարզ շարունակութիւնն է: Առաջին գրքոյլը հրատարակելին՝ մենք ասացինք, որ նորան նշանակում ենք որպէս երրորդ տարրուայ ուսուցման նիւթ, թէ և նորա առաջին մասը, առողջաբանական նախավատրաստութիւնները, համարձակ կարելի է անցնել երկրորդ տարրուայ ընթացքում: Բայց, ինչպէս երեսում է, մեր ուսուցիչները և ուսումնարանների ղեկավարները գժուար են համարում լեզուի այրութենից անանջատ այդ վարժութիւնները, որոնց դիւրութիւնն ու օդտակարութիւնը մենք քանից ստուգած ենք, սկսել երկրորդ տարրուց: Եւ ոչ այդշավ միայն, այլ նոյն խակքերականական ուսումը մեր ուսումնարաններում չի փայերում իւր արժանաւոր տեղը, մենք ուսուցիչներից և անսուշ—անսուհիներից շատերը այն կարծիքին են, որ քերականութեան ուսումը մի՛ աւելորդ բեռն է ուսումնարանի համար, որը կարելի է շատ հեշտութեամբ վերացնել, պատուիրելով լեզուի ուսուցչին ընթերցանութեան հետ աւանդել և լիզուի քերականական անհրաժեշտ գիտելիքները: Բայց նախ պէտք է գիտենալ, թէ որո՞նք են լեզուի հերականուիւնն անհրաժեշտ գիտելիքները, և, այդ իմանալուց յետոց, ովո՞ր է սահմանալ հայութեան ու յարաբառութեան ուղղեցուց, որ հեշտ չէ ամեն մի ուսուցչի համար: Երկրորդ՝ չպէտք է կարծել, թէ ինչ որ հեշտ է ուսուցչի համար, հեշտ կը ինի և աշակերտների համար: Ոչ ապաքին մանուկը սեահականում և իւրացնում է մի

44966, wh



Дозволено цензурою. Тифлисъ, 14 сентября 1890 г.

29826-63

12012

որևէ հմտութիւն բազմաթիւ գործնական վարժութիւնների չնորհիւ, ոչ ապաքին կրկնութիւնը զիտութեան մայրնէ, հետևապէս և վարժապետի աւանդած քերականական կանոնները ոչինչ արդիւնք չեն կարող ունենալ, եթէ աշակերտը միջոց չունենայ միանդամ աւանդածը իւր սեպհական ուժեղով կրկնել, երեքնել, վարժուիլ և արմատացնել իւր յիշողութիւն մէջ: Մենք պնդում ենք մինչև անդամ, որ եթէ մեր մինչև իսկ միջնակարգ ուսումնարաններից դուրս եկած աշակերտները հասած ուղիղ զրել չեն կարողանում, սորա պատճառը և հզօրագոյն պատճառն այն է, որ մեր գրական լեզուի ուսուցումը արհամարհուած և բարձի թողի է արած: Մինչդեռ մեր լեզուն շատ և շատ կարօտ է խնամածութիւնն. շատ և շատ կարեոր է, որ մեր ուսումնարանները ուսուցման զիստոր առաջիկան սա դարձնէին, սորան մշակէին, սորա հիմունքները, ոգին, քերականական և տրամաբանական կազմակերպութիւնը անծանօթ չխողէին իրանց աշակերտներից, այն աշակերտներից, որոնք վազը պիտի դուրս գան այդ ուսումնարաններից և իրանց գրուածներով կամ պիտի նպասակն լեզուի զարգացմանը կամ աւելի ևս աղաւաղեն նորան:

Եւ ով չի նկատում, որ մեր աշխարհաբար լեզուն՝ կանոնաւոր կազմակերպութիւնն վերաբերութեամբ կամ բոլորովին չի յառաջադիմում և կամ, որ աւելի ցաւալին է, օրէ յօր աւելի խառնագնթորպում, աղջատվում է: «Հայերէն է, կարելի է ամէն տեսակ զրել», այս գաղափարն այնչափ ընդհանրացած է մեր մէջ, որ մեղանից ամէն մինը տղիսութիւնից, անոնչադրութիւնից թէ ընդհանուր հոսանքին ենթարկուած լինելուց, առանց խղճահարուելու մեղմնչում է լեզուի ողու, նորա քերականական և տրամաբանական, գարերի ընթացքում կազմակերպուած, հիմնական կանոնների դէմ:

Մի ժամանակ քերականութիւնը միակ ուսանելի ա-

ռարկան էր համարվում, ով որ քերականութիւն գիտէր, նա ամենայն բան զիտէր: Քերականութեան այդ ուկէ դարում զիտութեան այբը և օն պարունակող այդ արուեստի ձեռնարկներն օր օրի վրայ աւելի ու աւելի սառւարանում, ընդարձակվում, մեծահասոր էին դառնում: Իւր իրաւունքի գագաթնակէտին հասնելուց և մի անտանելի բեռն դառնալուց յետոյ ուսանողի համար քերականութեան կարեսութիւնն սկսեց սակաւ առ սակաւ նուազիլ և մինչև իսկ կաստաքաղաքական մէջ ընկնիլ: Սա արդէն միւս ծայրանեղութիւնն էր: Պէտք էր դառնալ միջին դրութեան և տալ առարկային այն զիրքը, որ արժանապէս պիտի վայելի նա ուսանելի առականների համակարգութիւն մէջ: Այդ պէտքը եթէ երեկ չենք կատարել, այսօր գոնէ պիտի կաստաքաղաքականութիւնը, մենք արհամարհում ենք լեզուի ուսումը, իսկ արհամարհելով լեզուի ուսումը, մենք մեր բոլոր գործողութիւնը՝ մաղրենի լեզուի ուսուցման վերաբերութեամբ, կեզծ զրութեան մէջ ենք դնում:

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԵԱՆ
S U R E R Փ Բ
Մ Յ Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ

I. ՄԱՍՈՒՆՔ-ԲԱՆԻ
Ա. ԳՈՅՑԱԿԱՆ ԱՆՈՒԻՆ.

§ 74. Ամենայն առարկայ սնուն ունի (<§ 3>):
 Առարկաների անունները կոչվում են գոյական անուններ: Ինչպէս տեսանք՝ առարկան, ուրեմն եւ գոյական անունը նախադասութեան մէջ կատարում է՝ ենթակայի, բացայայտչի, լրացնողի եւ պատկանելութիւն ցոյց տուող որոշողի (յատկացուցչի) պաշտօն: Նա կատարում է եւ ստորոգեալի պաշտօն օժանդակ բառերի օգնութեամբ (եմ, լինիմ). Երբեմն կարող է եւ պարագայական բառերի պաշտօն կատարել (§§ 50, 51, 56, 57, 58, 60):

135. Հետեւեալ գոյական անունները ենթակայ ընդունելով նոցա մօտ աւելացրէք գոյական ստորոգեալներ է բառի օգնութեամբ:—Ուկին, չուշանը, մանուշակը, ուռենին, Երևանը, Երասխը, Էջմիածինը, հրացանը, խաղողը, ձնձուկը, կովը, գայլը, արծիւը, առիւծը, ցորենը, գարին, տունը, ջուրը, հացը...
 136. Այսպիսի նախադասութիւններ կազմեցէք, որոնց մէջ հետեւեալ գոյականները ստորոգեալ լինին:—Պատուղ է, թուփ է, ծաղիկ է, բանջար է, վայրենի գաղան է, ընտանի թռչուն է, չորքուանի կենդանի է, խաղալիք է, դասական առարկայ է, սունկ է, թունաւոր միջատ է, օգտակար միջատ է, երկրագործական գործիք է, ձիու կերակուր է, մարդու ընկեր է:

137. Հետեւեալ նախադասութիւններին գոյական որոշողն եր աւելացրէք՝... պատերը բարձր են (ինչի պատերը):—...գմբէթը վայլում է:—...ճղները կոտրատվում են:—...լանջը կանաչնել է:—...թերթիկները թառամել են:—...գիրքը կորաւ (մւմ գիրքը):—... ոտը կոտրուեցաւ:—...աչքը ցաւում է:—...թերերը թուլացան:—... չունչը կորուեցաւ:—..., տունը գեղեցիկ է:—... այդին մեծ է:

138. Հետեւեալ նախադասութիւններին աւելացրէք գոյական բացայայտիչներ, —Վարժապետը եկաւ (ո՞ր վարժապետը): Ընկերու գնաց: Եղբայրդ աշխատում է: Կարապետը աշխատասէր է:... թագաւորը պատերազմասէր էր:... Հայկը յաղթանդամ էր:... Արամը հզօր էր և հայրենասէր:... գետերը բղխում են Հայաստանից:... սարերը կանգնած են դէմ առ դէմ:... քաղաքը շնած է ծովի եղերքին:

139. Հետեւեալ նախադասութիւններին աւելացրէք գոյական լրացնողներ:—Գիւղացին հերկում է (ինչը, ինչով): Գիւղացին կազմեց արօրը (ինչից): Նա շատ փող տուեց (ինչին): Ուսուցիչը պարգևադրեց (մւմ, ինչով): Հարուստներն օգնում են (մւմ): Օդը և ջուրը հարկաւոր

ևն (ում, ինչին): Զուրը մենք ստանում ենք (ինչից):

140. Դաէք գոյական պարագայականները: — Առաւոտը մենք զնում ենք ուսումնաբան: Երեկոները ուշադրութեամբ սովորում ենք մեր դասերը: Անցեալ տարի մենք ամարտանոց գնացինք: Այս տարի մենք մնում ենք քաղաքում: Եկեղեցում մարդիկ աղօթում են: Ցերեկը չող է լինում, դիշերը հոփ: Ես նորան սրտանց սիրում եմ: Նու երեսանց բարեկամ է քեզ:

Գոյական անուան սեռը.

Հայէւ գնաց ուսումնաբան, իսկ Հայկ-անուան տանը մնաց:

Աշակէրու պատրաստում էր դասը, իսկ աշակերտուհին կար էր անում:

Հայէւ և աշակէրու բառերը տղամարդու անուն են. Հայէւն և աշակէրուհի կին մարդու անուն են:

+ § 76. Այն գոյական անունները, որոնք այր—մարդկանց են յատուկ, կոչվում են արական «եւ» գոյականներ. նոքա՝ որոնք կին—մարդկանց են յատուկ՝ կոչվում են իժական «եւ» գոյականներ:

Մարդկանց անուններից շատերը՝ արականից իդական գարձնելու համար, վերջից առնում են անուան, «եւ» եւ դաշտու մասնիկները:

× § 77. Բայց գոյական անունների մեծագոյն մասը չի ընդունում իդական մասնիկներ. այդպիսիների սեռը որոշում ենք՝ իրանց նշանակութեանը նայելով: — Եղբայր, քոյր, մանուկ:

+ § 78. Այն գոյական անունները, որոնք կարող են եւ արական սեռի լինիլ, եւ իդական, կոչվում են հասարական «եւ» գոյականներ: — Մասնաւու հասարակ սեռի գոյական անուն է:

Անշունչ առարկանները սեռ չունին:

141. Հետեւեալ գոյականների սեռը որոշեցէք: — Նրինայ, մանուկ, մանկամարդ, տղամարդ, կին—մարդ, կինարմատ, պատանի, ծեր, պատաւ, հայր, մայր, կոյս, քահանայ, բնիկ, գաղթական, քաղաքացի, գիւղացի, ոչխար, մաքի, խոյ, հաւ, մարի, որձակ, աքաղաղ, ձի, երիվար, մատակ, խող, մէրուն, փարազ, եղնիկ, եղջերու, կով, եղը, ցուլ:

Յատուկ և հասարակ գոյականներ.

ա. Քաղաք, գետ, գիւղ, մարդ, զօրապետ, թագաւոր:

բ. Երեան, Երասխ, Մասիս, Երնջակ, Մինաս, Վարդսոն:

Առաջին տողի գոյական անունները առհասուրութեատ շատ առարկանների կարող են պատկանիլ:

Երկրորդ տողի գոյական անունները՝ Ընդհակառակն, միայն մի հատ առարկայի յատուկ էն:

> § 79. Գոյական անունները երկու կարգ են բաժանվում՝ հասարական «եւ» անուան, որ բաղմաթիւ նոյնատեռ առարկանների կարող է պատկանիլ, եւ յատուկ, որ միմիայն մի հատիկ առարկայի պիտի պատկանի:

+ § 80. Յատուկ անունները միշտ գլխատառով են գրվում: Գլխատառով են գրվում նաև ազգանունն ու հայրանունը, որոնք նմանապէս յատուկ են:

142. Գրեցէք ձեր յատուկ անունը, հայրանունը և ազգանունը, գրեցէք ձեր հօր, մօր, վարժապետի անունը, հայրանունը և ազգանունը. գրեցէք, թէ ինչ թագաւորութեան մէջ էք ասլում, որ քաղաքում, որ դիւղում, որ գետի, ծովի, սարի մօտ:

143. Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց ենթական յատուկ անուն լինի, իսկ ստորոգեալը միևնոյն առարկայի հասարակ անունը:—Կարապեալը դարբին է:

Գոյական անունների թիւը.— Հաւաքական անուն:

ա. Գիրք, հաց, ծառ, քար, փայտ, կացին, բաժակ:
բ. Գրեր, հացեր, ծառեր, քարեր, կացիններ,
բաժակներ:

+ § 81. Գոյական անունը երկու թիւ ունի՝ եղակի եւ յոգնակի (§ 6.): Յոգնակի թիւը կազմվում է եղակիից՝ բառի վերջից աւելացնելով Ե՞րամ նէր մասնիկը, երբեմն եւ + տառը:

Միավանկ բառերը նէ մասնիկն են ընդունում յոգնակի թւում: բազմական բառերն ընդունում են նէր մասնիկը: Եթէ բառը մի եւ կէս փանկ ունի նա եւս նէր մասնիկն է առնում:—Ճշաճնե՞ր,
իբանինե՞ր:

Միավանկ բառերից կազմուած բազմականկ բառերը նէր մասնիկի փոխանակ էր մասնիկն են առնում՝—տանուտէր—տանուտէրեր, նախահայր—նախահայրեր:

Յատուկ գոյական անունները յոգնակի թիւ չունին (ինչը):

144. Հետեւալ գոյական անունները յոգնակի դարձէք:—Փար, պատ, մեխ, միս, չուն, սեղան, գերան, ըերան, մառան, դարան, գաւաղան, մասանի, դինի, հողի, որդի, աղաւնի, եկեղեցի, տղայ, քահանայ, կաթսայ, գալայ, ճամբայ:

Ոտ, ձեռ, կաթ, եղ, գառ, նուռ, դուռ, փուռ,
թոռ (ոտը, ձեռը...):

Ոսկը, աստղ, կրակ, ճրադ, գլուխ, ըլուր, սրահ, մըսուր, մեղք, մըսուր:

Հօրաքոյր, մօրաքոյր, լոտանուտէր, նախահայր, նախամայր:

Ոչխար, ոչխարներ—Հօտ, զինուորներ—
Չօբք:

+ § 82. Երբ շատ միատեսակ հասարակ գոյական անուններ՝ միասին ժաղանած, փոխում են իրանց հասարակ անունը եւ Եղակի նուով մի նոր անուն են ստանում, այդ նոր ստացած անունը կոչվում է հաւաքական անուն:—Հօտ, զօբք:

145. Հետեւալ յոգնակի հասարակ գոյական անուններից եղակի հաւաքական գոյական անուններ կազմուցէք:—Խոսեր, ծառեր, մարդիկ, թռչուններ, ձիեր, անասուններ, խոզեր, զինուորներ...

146. Հետեւալ հաւաքական գոյականները հասարակ գոյականների գարձնէք:—Ճօտ, ջոկ, անդեայ, երանակ, հորան, վոհմակ, պար, երամ, ջողբ, տարմ, վտառ, հող, բոյլ, դէզ, չեղջ, շողչ:

Բ. ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒԽ.

Պարտիզում կան ժէղէցի ծաղիկներ:

Երիայն մարմինները զարդարում են երկնակամարը:

§ 83. Նշանակեալ բառերը ցոյց են տալիս առարկայի որպիսութիւնը: Առարկայի որպիսութիւնն էլ իւր որոշ անունն ունի (§ 8.): Որպիսութիւն արտայայտող անուններին ասում ենք աժական անուն:

§ 84. Ածական անուան պաշտօնն է՝ գրուիլ գոյական անուան մօտ եւ որոշ նորան ուրիշ գոյական անուններից. բայց ածականը՝ եթէ մենակ մընայ, կարող է կատարել նաև ենթակայի, լրացնողի եւ ստորոգեալի պաշտօն:

147. Հետեւալ նախադասութիւնները վերլուծեցէք և գտէք որպիսութիւն ցոյց տուող որոշող—ածական անունները:—Մենք արժանացանք ուրախ մայիսին: Կատրոս երկնքում փայլուն աստղերը պարզ դիշերին դիւթական գեղեցկութիւն են տալիս: Առաւոտեան արշարուսին քաղցրածայն սոխակը երգում էր փարտի ծաղկապատ թփի վերայ: Երեկոյեան վերջալուսին սրաթի ծիծեւնակները վերապարձան դէպի իրանց փոքրիկ ձագերը: Գարնանային անձրենները կեանք են տալիս գաշտային բոյսերին և ցանքերին: Հիւսիսային եղջերունները տեղացի աղքատ բնիկներին անփոխարինելի ծառայութիւններ են մատուցանում:

148. Հետեւալ գոյական և ածական անուններից այնպիսի նախադասութիւններ չկնեցէք, որ գոյականը ենթակայ վնի և նախադաս, խակ ածականը՝ օժանդակ բառի հետ, ստորոգեալ:—Սուր դանակ (դանակը սուր է). ծանր մուրճ, թեթև կացին, պոդապաէ դուր, փոքրիկ եկեղեցին, մեծ աշաբակակ, բարձր գմբէթ, լայն փողոց, վաստ ճանապարհ, սառը ջուր, թափանցիկ ապակի, ուկէ մատանի, փացաէ տուն, պարսկական կապերա, արաբական նժոյդ:

149. Հետեւալ ածական անունների մօտ դըէք իրանց համապատասխան գոյական անունները:—Կարմիր, կապոյտ, գեղին, կանաչ, գորչ, մոխրագոյն, նարնջագոյն, շագանակագոյն, մանիչակագոյն, սպիտակ, սե, մեծ, փոքր, հաստ, բարակ, նուրբ, նօսր, թանձր, երկար, կարճ, լայն, նեղ, լոնդարձակ, համառօտ, ծանր, թեթև, առողջ, հիւանդ, բարձրահասակ, կարճահասակ, ամենի, վիթխարի, ահուելի, նազելի, հաճելի, կոր, ծուռ, ուղիղ, կոյր, կաղ, բուժ, սուր, ցածր, բարձր, ցած, սոսր, ցանցառ, խուլ, համբ, խոնաւ, չոր, տխուր, ուրախ, զուարթ, թթու, քաղցր, գառը, տափակ, սաք, սառը:

150. Հետեւալ ածականների մօտ ևս դըէք իրանց համապատասխան գոյականները:—Քաղաքային, ծովային, ջրային, ցամաքային, դաշտային, երկնային, հիւսիսային, հարաւային, երկրաւոր, երկնաւոր, վիւզական, տնային, բնական, կենդանական, կուսական, արևելեան, արևմտեան, պարսկական, հայկական, հնդկական, սուաւոտեան, երեկոյեան, տարեկան, տմասկան, բուսեղէն, մուղին, խմորեղին, քարեղին, փայտեղին...

Որակական և յարաբերական
ածականներ.

Առողջ խօսքը տուն կըշինի, բարեւ խօսքը տուն կըքանդի:

Փայտեղին տունը գործեղին տան չափ ամուռ չի լինում: Անողջ բարեւ անոր ածականները գոյականի իսկական որպիսութիւնն են ցոյց տալիս. դոքա առարկայի անբաժն յատկութիւններն են. կայտղին և գործեղին ածականները թէկ նոյնպէս ցոյց են տալիս գոյականի որպիսութիւնը, բայց այդ որպիսութիւնները առարկայի բնութիւնց չեն բղիում այլ ցոյց են տալիս նորա ուրիշ առարկաների հետ ունեցած յարաբերութիւնը:

§ 85. Ածական անունը երկու տեսակ է՝ «բակական և յարաբեղական»:

+ Որակական ածականը ցոյց է տալիս գոյական անուան բնական որպիսութիւնը: Որակական ածականի ցոյց տուած որպիսութիւնը կարող է աւելանալ եւ պակասիլ՝ մի առարկայի վերաբերութեամբ շատ լինիլ, իսկ միւսի վերաբերութեամբ սակաւ:

Յարաբերական ածականը ցոյց է տալիս առարկայի ստացական յատկութիւնը:

Յարաբերական ածականի ցոյց տուած յատկութիւնը չի կարող աւելանալ կամ պակասիլ:

§ 86. Որակական ածական անուններն ունին երեք համեմատութեան աստիճաններ՝ բարձրական և գեղադրական: — Քաղցր, աւելի քաղցր, ամենաքաղցր:

§ 87. Դրական աստիճանը պարզապէս գոյականի լինլին է ցոյց տալիս: — Մեծ, փոքր, թեթեւ, ծանր, ցածր, բարձր:

Բաղդատական աստիճանը՝ մի առարկայ միւսի հետ համեմատելով, ցոյց է տալիս բաղդատած առարկայի աւելի կամ պական որպիսութիւնը: — Աւելի մեծ, աւելի փոքր, աւելի թեթեւ, կամ՝ մեծագոյն, փոքրագոյն, թեթեւագոյն:

Գերագրական աստիճանը որպիսութեան գերազանց գրութիւնն է ցոյց տալիս: — Ամենամեծ, ամենածանր, կամ՝ ամենից մեծ, ամենից ծանր, երեմն էլ լազ, անզափ, անառիկ բառերի օգնութեամբ՝ շատ զօրաւոր, անչափ մեծ, սաստիկ գըժուարին:

Գերագրական է եւ բարձրեալ ածականը, որ միայն Աստուծուն է սեպհական:

§ 88. Յարաբերական ածականները համեմատութեան աստիճաններ չունին. նոքա իրանք ծագում են ուրիշ բառերից եւ ցոյց են տալիս գլխաւորապէս նիւթի, տեղի, ցեղի եւ ժամանակի յարաբերութիւնը: — Մաեպէն, երկնային, հայկեան, առաւօտեան:

151. Հիսուսակ նախագասութիւնների մէջ որոշեցէք որակական և յարաբերական ածականները: — Դարձանային անուշ եղանակն անցաւ, եկան ամարային տօթ օրերը: Անանային յորդ անձրմները դադարեցան: Երեկոյեան մեղմ զեփիւուը զավութիւն էր տարածում: Առաւօտեան թարմ օդը լիբն է անուշանոտութեամբ: Անձրեային օրերը

գիւղացիք ցաքանում են վասկուլ ցելերը: Փոթորկալի ծովը կասաղի ալիքներ ուներ: Ծովային փոթորկալ քանի զնաց՝ սաստկացաւ: Ծաղկաւէտ դաշտերում արածում են ընտանի կենդանիները: Դաշտային ծաղկիներից գիւղացի համեստ օրիորդները իրանց համար գեղեցիկ փունջներ կապեցին: Բարի մարդիկ արժանաւոր դործեր են կատարում: Ընտանի կենդանիները լցուցանում են մարդու առտնին կարիքները:

Գ. ԹՈՒՍԿԱՆ ԱՆՌԻՆ.

Տարին ունի բաներէն՝ ամիս: Տարուայ առաջին ամիսը յունվարն է:

Տաներէն՝ բառը որոշում է առարկան և ցոյց է տալիս նորա թիւը (քանի^o):

Առաջին բառը ցոյց է տալիս առարկայի կարգը (ո՞ր երորդ) և նոյնպէս որոշող բառ է:

Տաներէն՝ և առաջին բառերը թուերի անուններ են:

§ 89. Այն բառերը, որոնք ցոյց են տալիս գոյական անուան թիւը եւ դասաւորութիւնը, կոչվում են նուտաշան անուններ:

§ 90. Թուական անունները երկու տեսակ են լինում: Էացարչակ՝ որ առարկայի քանի լինին է ցոյց տալիս՝ մէկ, երկու, երեք, չորս, հինգ եւ այլն. Շատասարական՝ որ առարկայի որ երորդը լինին է ցոյց տալիս՝ առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ եւ այլն:

§ 91. Դասաւորական թուականները ծագում են բացարձակներից՝ Երարչ մասնիկն առնելով իրանց վերայ: Հինգերարչ, քսան՝ Երարչ, հարիւր տասն եւ հինգերարչ, հաղարերարչ:

Մէկ, երկառ, երեւ, չըս թուականների դասաւորականն է՝ առաջին (առաջներորդ), երկ-յարչ, եր-յարչ, չոր-յարչ:

§ 92. Բացարձակ թուական անուններին՝ Երարչ մասնիկի փոխանակի, ական մասնիկն աւելացնելով ստանում ենք Յաշուկոն թուական անուններ, որոնք ցոյց են տալիս, թէ գոյական անունը քանի անգամ է վեր առած: Մէկ, երկառ, երեւ, չըս բացարձակները ական մասնիկ չեն առնում: Նոցա բաշխականն է՝ մէկ՝ մէկ, երշ՝ երկառ, երեւ՝ երեւ, չըս՝ չըս: Միւս բացարձակ թուականները, բացի կրկնաւոր բաշխականներից (հինգ՝ հինգ, վեց՝ վեց), առնում են վերոյիշեալ ական մասնիկը. Հինգական, վեցական, եօթնական, քսանական, հաղարական:

152. Կարգով զրեցէք բոլոր բացարձակ թուական անունները և նոցա հանդէպ դասաւորականներն ու բաշխականները:

93. Դասաւորական թուականներին եթէ աւելացնում ենք ական մասնիկը, ստանում ենք մասնական թուականներ, որոնք գոյական անուան մասները կամ կոտորակներն են ցոյց տալիս. մէկ, երրորդական, հինգերորդական, հարիւր երրորդական...

§ 94. Բացարձակ թուականներին աւելացնելով նոց մասնիկը՝ կ'ստանանք արժէք եւ չափ ցոյց տուղ թուական անուններ. մէկնոց կամ մէկտ-

նոց, երկուսնոց, երեքնոց, չորսնոց, հինգանոց, վեցանոց—վեցնոց...

153. Հետեւեալ թուական անունները՝ իրանց նշանակութեանն ու կազմութեանը նայելով, զանազան կարգերի բաժանեցէք:—Մէկ, կէս, առաջին, քառորդ, երկու, երեք, երկորդ, երկուսնոց, երեքնոց, չորս, չորրորդ, չորսնոց, չորրորդական, հինգ, հինգերորդ, հինգնոց, հինգերորդական, վեցնոց, վեցերորդական, վեց, վեցերորդ, եօթներորդ, եօթը, եօթանոց, եօթներորդական, ութ, ութերորդական, ութնոց, ութերորդ, ինն, իննական, իններորդական, երկ—երկու, մէկ—մէկ, հնգական, չորս—չորս, տասնական, տասներորդական, տասնանոց, քսան, քսանական, քսաներորդական, քսանանոց, երկու հարիւր երեսուն և վեցերորդական, հազար հարիւր վաթսուն և հինգերորդ, ութհարիւր երեսուն և չորսանոց, հազար ութհարիւր ութսուն և երեք, հազար ութհարիւր ութսուն և երրորդ թուականին, երկու հարիւր քառասուն և չորրորդ օրը:

§ 95. Բացարձակ թուական անունները կարող են ստանալ նաեւ առող եւ էան մասնիկները:—Միա-ար, տասնա-ար, հարիւրա-ար, հազարա-ար. երկուէան, երեւէան...*)

Գ. ԴԵՐԱՆՈՒՆ.

Յովհաննէսը վերցրեց Քեղեցի գիրքը:
Նա վերցրեց այն գիրքը:
Նա բառը զրուած է Յովհաննէս յատուկ անուան
տեղը. այն գրուած է Քեղեցի որակական ածականի տեղը:

*) Երկուքեան, երեքեան, չորեքեան բառերը կը կնաւոր թուականի միտք ունին—երկուսն էլ, երեքն էլ, և աւելի անորոշ դերանունն պիտի համարուին, քան թուական անուն:

§ 96. Այն բառերը, որոնք դրվում են գոյական եւ ածական անունների տեղը եւ կատարում են նոյց պաշտօնը, կոչվում են բերանուն (գեր—անուն):

§ 97. Գոյական անունների պաշտօն կատարող բառերը կոչվում են գոյական բերանուններ: իսկ ածական անունների պաշտօն կատարողները—ածական բերանուններ:

154. Հետեւեալ նախադասութիւնների մէջ գտէք գոյական և ածական գերանունները:—Կուլը, ձին և շունը վիճում էին միանց հետ, թէ տանուտէրը նորանցից ոքին աւելի է սիրում: Ի հարկէ նա նից աւելի է սիրում, ասաց ձին. և նոր արօրը և ցաքանը քաշում եմ, դաշտից նոր համար փայտ եմ բերում. և նա նից հեծնում է ինչ ու քաշում է գնում. առանց ինչ նա միանդամայն կորած կը լինէր:

Խնձորենին ասաց կաղնուն. չէ՞ պատունները թագաւորի սեղանն են զարդարում: իսկ ո՞ո միայն խոզերի կերակուր ես:—Ա, հուն իրաց զլուխն էին գովում:

§ 98. Գոյական գերանունները նախադասութեան մէջ կատարում են ենթակայի եւ լրացնողի պաշտօն:—Ես յարգում եմ նարան:

Ածական գերանունները կատարում են որոշողի պաշտօն: Այս աշակերտը վերցրեց նոր գիրքը:

155. Վերեկի վարժութեան (154) նախադասութիւնները վերլուծեցէք և ցոյց տուէք, թէ գոյական գերանուններն ինչ պաշտօն են կատարել:

156. Հետեւեալ օրինակները վերլուծեցէք տրամարանօրէն՝ նախադասութեան անդամներով:—Այն տունը շինած է այս վարպետի ձեռքով: Սա լաւ աշակերտ է: Ես յարգում եմ այս աշակերտին: Երեկ մենք՝ բոլոր աշակերտ-

ներս, զբօսնելու գնացինք։ Մարդս ինքը պէտք է հոգայ իւր համար։ Նոքա իրանց գործերը կարգավրեցին։ Սա, դա և նա գնացին այդի։ Այս, այդ և այն տղաները գնացին այդի։ Ո՞վ եկաւ։ Ո՞ր մարդն եկաւ։ Այնպիսի բան պիտի անէք, որ ինքներդ չկարմրէք ձեր արածի համար։ Քո մատիտն էլ գեղեցիկ է, բայց լմն աւելի գեղեցիկ է։ Աստուած, որ ամենիս ստեղծողն է, իննամում է աշխարհ։ Գու, որ ընդունակութիւն ունիս, պէտք է աւելի աշխատես։ Ամենայն ոք մտաւ իւր տուն։

ա. Ես գնում եմ ուսումնարան, ո՞ւ էլ եկ այնտեղ և թող ինչը միայն տանը մնայ։

բ. Սա, ո՞տ և նու գիտեին իրանց գասերը, իսկ այս, այդ, այն մասուկները չգիտեին։

գ. Թող նա վերցնի ի՞ս, ո՞ւ և ի՞ւ զբերը։

դ. Ո՞վ է նա և ի՞նչ, է կամենում։ Ո՞ր տղայի մասին է ձեր խօսքը։

ե. Այս աշակերտը, ո՞ր գասատանն անուշագիր է, յառաջադէմ չի կարող լինիր։

զ. Ու սու չգիտէ, թէ վաղը ի՞նչ պիտի պատահի ամենին։

§ 99. Գերանունները՝ իրանց մասնաւոր նշանակութեանը նայելով, վեց տեսակ են լինում։

ա. Էտէան կամ անչնական գերանուններ, որոնք գրվում են խօսող անձների տեղը՝ ես, ո՞ւ, ի՞նչն, թէնի, դուսի, տասի, ի՞ւսու։

բ. Յառաջան գերանուններ, որոնց մատնացոյց է անում խօսողը, որպէս իւր խօսակցութեան նիւթ եղողների՝ սո, ո՞ս, նա, սուս, ո՞սու, նսու։ Այս, այդ, այն, սոյն, ո՞սյու, նոյն։

գ. Սուացական դերանուուններ, որոնք ցոյց են տալիս, թէ առարկան ում է պատկանում, ում ուտացուածքն է՝ իմ, ո՞ս, ի՞ս, մեր, յեր, ի՞ւնաց։

դ. Հարցական գերանուններ։ «՞ի, ի՞նչ ո՞ր։

ե. Յարտէրական գերանուն, որ գլխաւոր նախագասութեան մօտ բերում է մի երկրորդական որոշող կամ բացայացիչ նախագասութիւն՝ ո՞ր։

զ. Սնորոշ գերանուններ, որոնք ընդհանուր ձեւով գրվում են գոյական եւ ածական անունների տեղը՝ «մն, ո՞ւ, ո՞ւսու, ի՞նչ ո՞ւնչ ամէնուը, մի-ո՞ւ..»

156. Հետևեալ նախագասութիւններից՝ վերոյիշեալ բաժանման համաձայն, արտադրեցէք նշանակալ գերանունները։

Այն «՞ի է կանգնած ամբիոնի վերայ։ Ի՞նչ ես խըրխնջում, ի՞մ ձի եռանդուն։ Ո՞ր է Զայաստան աշխարհը։ Ո՞րպէսի անձն էր Տիգրան Երուանդեանը։ Ի՞նչ է՞նչ փոյթ, թէ ո՞ւ- ներութիւն ունիք։ Ես գիտեմ, որ մնու ամառը ամարանոց ենք գնալու։ Ասա ո՞ւ- ի՞ն, ոստդ վարդի։ Դ-ու- էր երկրի աղը, ասաց Յիսուսը ի՞ւր աշակերտներին։ Ի՞նչ է ստեղծողը, ի՞նչ էլ կը ինամէ։ Երան+ եղան ի՞րանց թշուառութեան պատճառը։ Ո՞վ է սո, որ քամին էլ, ծովն էլ հնազանդում են սորան։ Նո ի՞նչ է թագաւոր փառաց։ Դ-ու է Աստուծոյ գառը, որ աշխարհիս մեղքը պիտի բառնայ։ Այս այն Յովիաննէսն է, որի զուխը կարել տուեց Հերովդէսը։ Այսուան մարդիկ այն եկեղեցում չեն տեղաւորուիլ։ Ես այդպէսի փառաւոր հանդէս չեմ տեսած։ Ճշմարիս որթը ես եմ, իսկ ի՞մ հայրը մշակ է։ Տէր, ո՞ս ողորմութեամբդ պահպանիր Պէս Մէր հայր, ո՞ւ երկնքումն ես, սուրբ լինի ո՞ւ անունը։ Այս գետը, որ բլիսում է Գեղամայ լճից, կոչվում է Հրազդան։ Ի՞ւ սու չի կամենում ի՞ւր պարտքը կատարել։

Այս ձևոնարկութիւնից Ձեւ ունեն օգուտ չստացանք: Դուրսը
ու Գն կայ կանգնած: Ուստ այս է ասում, ուստ այն: Ուստ
կարծում են, թէ արեգակը պատում է երկրի շորջը: Ի-
բարձանչուր մարդ հանգստանում էր իւր ծառի հովանիի տակ:
Մէկ մարդ դժուն խրառում էր, որ իւր յոյսը ուրիշներ
օգնութեանը չդնէ:

Ե. ԲՈՅ.

ա. Աշակերտը էրում է, կարուսմ է, նիւրում է:

բ. Աշակերտը յախուսմ է, հանգուստանում է, ժում է:

գ. Աշակերտը դադիչում է, սէրվում է, դարձեառար-
գում է:

Բոլոր ստորոգեալները ցոյց են տալիս աշակերտի
գործողութիւնը: Առաջին տողի ստորոգեալները ցոյց են
տալիս մանկան կարառած գործողութիւնը, երբորդ տո-
ղի ստորոգեալները ցոյց են տալիս նորա ուրիշներից
հրած գործողութիւնը, իսկ երկրորդ տողի ստորոգեալ-
ները ցոյց են տալիս նորա դրամներնը:

§ 99. Այն բառերը, որոնք ցոյց են տալիս ա-
ռարկայն արած կամ կրած գործողութիւնը եւ
դրութիւնը, կոչվում են բայ:

§ 100. Բայերը, իրանց ցոյց տուած գործո-
ղութեանը նայելով, երեք տեսակ են լինում:

ա. Ներդարժական, երբ բայի գործողութիւնը
գլխաւոր առարկայից անցնում է երկրորդական
առարկայից կամ ենթակայից լրացնողին: Աշա-
կերտը կարտում է, ժըսմ է, սէրվում է (ինչը) դասը:

բ. Կրամական, արծուական գործողութիւնը, ընդ-
հակառակն, երկրորդ ենթակայից դասը է

գլխաւորի վերայ, այսինքն ենթական կրում է
լրացնողի գործողութիւնը: Աշակերտը պատժվում
է, սէրվում է, պարգևատրվում է վարժապետից:

գ. Զեղսու, երբ բայի ցոյց տուած գործողու-
թիւնը մնում է գործող անձի մէջ, այսինքն
գլխաւոր առարկան չի ներգործում, բայց եւ
չի կրում ուրիշի գործողութիւնը: Աշակերտը յան-
նում է, հանգուստանում է, ժում է:

Բայերի տարբեր տեսակները «Ե» են կոչվում:

§ 101. Ներգործական բայերը ձեւով նման
են չեղոքականին, իսկ մաքով տարբեր:

Ներգործական է բայը, երբ իրան մօտ ունի
ուսւն լրացնողի բուն լրացնողը կ'ան եւ ա՞մ հարց-
մունքների պատասխանն է եւ կոչվում է ներգոր-
ծական բայի աեւի խնդիր: — Աշակերտը գրում է
դասը (ինչ է գրում): Աշակերտը յարգում է վար-
ժապետին (ում է յարգում):

§ 102. Չեղոքական բայերը չունին բուն լրա-
ցուցիչ կամ սեռի խնդիր: — Աշակերտը յոգնում
է, հանգստանում է, քնում է (չի կարելի ասել՝
ինչ է քնում կամ ում է քնում):

§ 103. Կրամարական բայը ձեւով տարբեր է
ներգործականից, բայց նորանից է ծագում: Կրա-
մարական բայն էլ ունի սեռի խնդիր, միայն այդ
խնդիրը իմացվում է ա՞մանց, ինչից, երբեմն ա՞մ
ձեւուվ: — Դասը գրվում է աշակերտից (ումնից):
Աշակերտը վարձատրվում է վարժապետից (ում-

նից): Քարը տաշվում՝ է ժայռաշնչը յեւ+ան:

Ամենայն ներգործական բայ իւր կրաւորականն ունի. ուրեմն՝ ամենայն ներգործական խօսք կարող է եւ կրաւորական ձեւով արտայայտուիլ:

104. Զեղոքական բայերից երկուսը՝ էմ եւ լինի, որոնք միշտ օժանդակում են ստորոգեալի կազմութեանը, կոզգում են էական կամ օժանդակ բայեր:—Ես մարդ էմ, գու մարդ էո, նա մարդ է: Նորանք աշխատասէր իւ լինին, մենք աշխատասէր իւ լինին+, գուք աշխատասէր իւ լինի+:

157. Հետեւեալ ստանաւորի մէջ որոշեցէք բայերի սեռ:

Գալիս է ամառ—այրող եղանակ,

Անխոնջ վաստակի, պաղի ժամանակ.

Իւր աստուածեղին ջերմութեան հոգին

Կինաստու չնուվ ժամանէ արփին (ծաւալում է):

Հաւաել է ծիրան, տանձը մեղրածոր.

Կարմիր վարդի պէտ փայլում է ինձոր.

Սաթանման դեղին հախուսէ է ողկոյդ.

Մանկաին ժրանում է զոր, նուռն և թուզ (մում է դրաւում):

Սեխով, ձմերկով լիքն է բուրաստան.

Ոսկեայ հոսանքով ժի՞ անդաստան (ծփում է)

Եւ արտօրացքի ծանրացած հասկեր՝

Խիստ հիանալի նկարեն պատկեր (նկարում են):

Յեւ երից անգամ երդի խօսնակին՝

Զարթնում է իսկոյն հնձւորի հոգին:

Փայլում է մանգաղ: Գործում է մշակ:

Քարձած սայրակի ճոխնչն անուշակ

Հնլում է հեռու, հեռու դաշտերից,

Բէրում դէսլի կալ հունձքը արտերից:

158. Հետեւեալ նախաղասութիւնները վերլուծեցէք և գոլէք բայերի սեռը, նոցա համար դրուած բուն և երկրորդական լրացուցիչները (սեռի և բնութեան խնդիր):—

Քարտաշները տաշում են կարծր քարերը, Քարը կրտրում են ժայռերից: Զկնորսը ձուկը բռնեց: Զկները հանեցին ուռկանից: Հայրը կանչեց իւր որդուն և նորան գործի ուղարկեց: Վարժապետը գովեց և խրախուսեց յառաջադէմ աշակերտներին: Մայրը ժողովեց իւր զաւակներին և կերակրեց նոցա: Ես սառն ջոր խմեցի: Լողնորդն աղասեց խեղգուողին. Դու կը հաւանիս իմ գիրքը, եթէ տեսնեա: Զաղացում ցորեն են աղում: Լուացարարը սպիտակեղին էր լուանում: Հացթուխը հաց է թխում: Ես նորան չեմ ճանաչում:

159. Վերիի վարժութեան բոլոր նախաղասութիւնները վոփիսեցէք այնպէս, որ ենթական լրացնող դառնայ, լրացնողը ենթակայ, իսկ ներգործական սեռի բայերը վոփսուին կրաւորականի:—Կարծր քարերը տաշվում են քարտաշներից: Քարերը կտրվում են ժայռերից: Զուկը բռնուեցաւ գետից ձկնորսի ձեռքով և այն:

160. Հետեւեալ վարժութիւնների մէջ գոլէք բայերի սեռը:

Ապրիկ կայ երկաթ է, ապրիկ կայ արծաթ է: Գողը գողին գողացաւ, Աստուած վերէն զարմացաւ: Կուշտը սովածին մանր կը բրթի: Թունդ քացախը իր ամանը կը ճաքացնի: Շունը կը հաշի, քարփանը կը քոչի: Սուտ ասողի տունը կը ընկաւ, ոչ ոք չհաւատաց: Ինձ տես, քեզ լաց, որտեղ որ է, հաստատ կաց: Աղքատն ունի հաց ու պանիր, գիշերը քունը չի տանիր: Մի բաժակ ջուր ով ուզի՝ տուր: Հաց ու պանիր՝ կեր ու բանիր: Հացի կրտածը թուրը չի կտրի: Թրի կրտածը կը սաղանայ, լեզուի կծակը չի սաղանալ: Մարը սարին չի գիպչի, մարգը մարդուն կը գիպչի: Պատուիր ծերին, որ ծերանաս: Երբ ծերանաս, ծերի պատիւը կ'իմանաս:

161 Սոխակը երգում է. սոխակը թուչում է. սոխակը բոնիում է: Արծիւը թուաւ. արծիւը յափշտակեց մի նապատակ. արծիւն սպանուեցաւ որսորդից: Կովը բառաչում է. կովը խոտ է ուտում, կաթն է պատրաստում, հորթ է ծնում և կերակրում է նորան կաթով: Գայլը յափշտակեց մի գառը. գայլն սպանուեցաւ որսորդի ձեռքով. որսորդն սպանեց գայլը, կաշին մաշկեց և տարաւ վաճառեց: Երկրագործը երկիրը կը վարի, ցորեն կը ցանի, աշնանը կը հնձի, կալը կը տանի, կամնով կը կալսի, ամբարը կ'ածի: Խոտը հնձուեցաւ, ցորենը կալսուեցաւ, ջաղաց տարուեցաւ, ալիւր ջննուեցաւ, յետ տուն բերուեցաւ, խմոր հունցուեցաւ և հաց թխուեցաւ: Ծովն ալեկոծուեցաւ քամուց: Քամին ալեկոծեց ծովը: Ծովը վայլում է լուսնի լուսով: Օդը տաքացաւ. գիշերը կարճացաւ. ցերեկը երկարեցաւ. Ծիծեռնակը կը գայ մեր երկիրը, բունը կը զոնէ, նորան կը կարկատէ, երեք ձու կածէ, թուիս կը նստի, ձագեր կը հանէ, կը կերակրէ, կը մեծացնէ և աշնանը իւր հետ տաք երկիր կը տանէ:

Բայի եղանակը, ժամանակը, թիւը և դէմքը.

§ 105. Բոլոր գործողութիւնները միաձեւ չեն կատարվում: Միեւնոյն գործողութիւնը տարբեր ձեւերով կարող է կատարուիլ. կարելի է, օրինակ, պատճեւ թէ ինչպէս է մի գործողութիւն սկսվում եւ վերջանում; կարելի է նաև երանայիւ կամ իրնդրել, որ չսկսած գործողութիւնն սկսուի եւ կատարուի, կարելի է, վերջապէս, չառաջ յայտնել գործողութեան կատարման մասին:

Ամենայն գործողութիւն, ամենայն բայ կատարման երեք ձեւ կամ եղանակ ունի՝ ա. ստհմանական եղանակ՝ երբ գործողութեան սկիզբը եւ վերջը—սահմանները մեզ որոշ յայտնի են. բ. հրամայական եղանակ, երբ գործողութիւնը չի սկսուած, բայց մենք հրամայում եւ խնդրում ենք, որ սկսով եւ կատարուի. գ. սահմանական եղանակ, երբ գործողութեան կատարման մասին որ եւ իցէ տարակուսանք կամ կասկած ունինք:—Կարգում եմ, կարգամ, որ կարդամ:

§ 106. Ամենայն գործողութիւն կատարվում է որ եւ է ժամանակամիջոցում: Ժամանակները երեք են՝ ներկայ, անց՝ աշխատանի՝ կարգում եմ, կարգացի, կը կարդամ:

§ 107. Անցեալը չըրս է. կայ գործողութիւն, որ անցել է, բայց կիսակատար է մնացել՝ դա կոչվում է անցեալ անհարար—կարգում էի. կայ՝ որ վերջացել է մօտ ժամանակում՝ կարգացի, սա կոչվում է անցեալ կատարվեալ ժամանակ. կայ որ համեմատաբար աւելի կանուխ է կատարուել՝ կարգացել եմ: սա կոչվում է վաղակադար ժամանակ. եւ, վերջապէս, կայ եւս, որ ամենից կանուխն է ցոյց տալիս՝ կարգացել էի. սա գերակադար ժամանակն է:—Անկատար, կատարեալ, վաղակատար, կերակատար:

§ 108. Ապաւնին էլ երկու է՝ ապաւնի

սլարդ՝ կը կարդամ, եւ ապառնի պայմանական՝
կը կարդայի:

§ 109. Սամանական եղանակն ունի բոլոր յիշած ժամանակները:

Հրամայտական եղանակն ունի միայն մի ժամանակ՝ ներկայ, որովհետեւ հրամայել կարելի է միայն ներկայում:

Ստորագասական եղանակն ունի երկու ժամանակ՝ ապառնի — «ր կարդայի»:

§ 110. Գործողութիւնը կարող է խօսողը կատարել, կարող է կատարել լսողը, կարող է կատարել եւ այն անձը, որի մասին մենք խօսում ենք, վերջապէս ամենայն գործողութիւն կարող է մէկ անձն կատարել միայնակ, կարող են եւ շատերը միասին կատարել: Ուրեմն բայն ունի երեք դէմք եւ երկու նիւ՝ եղակի եւ յօգնակի — ես կարդամ էմք, դու կարդամ էս, նաև կարդամ է. մենք կարդում էնք, դուք կարդում էք, նոքա կարդում էնք:

161. Ձեր դասի մէջ գտէք բայերի սեռը, եղանակը, ժամանակը, թիւը և դէմքը:

Զ. ԴԵՐԲԱՅ. 1.

Ես կարդամ գիտեմ:
Կարդայած գիրքս շատ հետաքրքիր է:
Կարդաւու գասեր ես շատ ունիմ:
Կարդացող մարդիկ միշտ յարդանք են վայելում:
Վերսիշեալ նախագասութիւնների մէջ նշանակեալ բառերը գործողութիւն անուններ են. բայց գոյց ցոյց տուած գործողութիւնը չէ կատարվում, միայն յիշվում է. Տարբեր են, օրինակ, կարդալ և կարդաս էմք բառերը. Երկրորդը կատարուող գործողութիւն է — բայ է, ունի եղանակ, ժամանակ, թիւ, դէմք. իսկ առաջինը բայի սկզբնական ձեն է, բայի անունն է միայն. Այսպէս են և միւս նշանակեալ բառերը:

§ 111. Այն բառերը, որոնք գործողութիւն են ցոյց տալիս, բայց իրանց ցոյց տուած գործողութիւնները կատարման դրութեան մէջ չեն, կոչվում են դէմքայ:

§ 112. Վերբայերը երկու պաշտօն են կատարում. Էսկան բայերի օգնութեամբ նոքա գիմաւոր բայի գեր են կատարում — կարգացած եմ, կարգաւու եմ, կարգացող եմ: Առանց էական բայերի նոքա կատարում են գոյական եւ ածական անունների պաշտօն եւ իսկապէս բայ — անուն են:

§ 113. Վերբայերը չորս են՝ ա. անոյնշն որ բայի սկզբնական ձեւն է եւ ունի չորս վերջաւորութիւն՝ էլլ էլլ ալ անալ (գրել, խօսիլ, կարդալ, զարմանալ):

բ. Անցեալ գերբայ, որ կատարուած ու վերջացած գործողութեան անունն է՝ գրած, խօսած, կարդացած, զարմացած։

գ. Ապառանի գերբայ, որ գեռ եւս չսկսած գործողութեան անունն է՝ գրելու, խօսելու, կարդալու, զարմանալու։

դ. Ներկայ գերբայ, որ գործ կատարողի անունն է՝ գրող, խօսող, կարդացող, զարմացող։

Ե. ՄԱԿԻԱՅ.

Ի՞նչեւ գժուար է մարդ ճանաչիլը։
Հառեւ ազատուեցանք փորձանքից։
Ո՞ւր գնացիք, ինձ այսուեւ մայնակ թողիք։
Ե՞բ էք վերադաբել քաղաքից, երե՞ւ թէ այսու։
Ուշ է. առ այժմ է՞ քիչով գոհ կը լինիմ։
Ուրած մեծ եղաւ զարմանքս, երբ ձեզ տեսայ։
Շատ անդամ մենք մեղ վնաս ենք տալիս։
Ի՞նչեւ է՞ տիսուր, ո՞ւր է ձեր զուարթութիւնը։
Արդեօ՞ւ այսօր ներկայ էիք հանդիսին։
Այս՛, ես գնացել էի. արդարւ շքեղ հանդէս էր։
Նա երբէւ տանից չի գուրս գալիս էիշեւ։
Քո՞ւ վցէ՝ ես այդպիսի բան չեմ անիլ։
Տրամարանօրէն լուծելով վերսիշեալ նախադասութիւնները, մենք տեսնում ենք, որ նշանակեալ բառերը ցոյց են տալիս գործողութեան այլ և այլ առողջութեւ։

§ 114. Գործողութեան համար դրուած եւ նորա պարագաները ցոյց տուող բառերին ասում ենք հակեայ (մակ—բայ)։

§ 115. Մակբայերը գլխաւորապէս եօթը տեսակ են։

ա. Հարցական՝ ուր, ինչպէս, արդեօք, երբ, ինչի, որքան, քանի, քանի անգամ։

բ. Հասագագական՝ այս, արդարեւ, իրաւ, իրաւցնէ, իսկ եւ իսկ, հենց, յատկապէս, ճիշդ։

գ. Բացառական՝ երբէք, քաւ լիցի, ամենեւին, ընաւ, ոչ։

դ. Որակական՝ սաստիկ, հազիւ, շուտով, շտապ, բռնի, կամաւ, կամաց, շուտ շուտ, արագ։

ե. Քանակական՝ շատ, սակաւ, քանիցս, շատ անգամ, հինգ անգամ, կրկին, դարձեալ, էլի։

զ. Տեղական՝ գուրաը, ներսը, մօտը, ուր, վերեւ, այստեղ, այնտեղ, ներքեւը, մէջը...

է. Ժամանակական՝ այժմ, յետոյ, վաղը, միշտ, երբեմն, առ այժմ, գիշերը, ցերեկը։

Պատճառ ցոյց տուող պարագայական բառերը մակբայ չեն։

Հ. ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ.

Ծիտը կանգնեց ծառի վերայ։
Ծիտը իջաւ ծառի առակ։
Ծիտը թռաւ դեպէ ծառը։
Ծիտը կանգնած է ծառի հար։
Ծիտը կանգնած է ընկերի հետ։
Ծիտը երգում է ընկերի համար։
Ծիտը չի երգում ինչեւ ծիծեռնակը։

Ամեն մի նախադասութեան մէջ երկու գոյական անուն կայ. նօտրագիր բառերը, որոնք ինքնին ոչինչ նշանակութիւն չունին, գրուել են գոյականներից մէկի մօտ և ցոյց են տալիս երկու գոյականների մէջ եղած յարաբերութիւնը:

§ 116. Այն բառերը, որոնք դրվում են գոյական անունների մօտ եւ ցոյց են տալիս տուարկանների փոխադարձ յարաբերութիւնները, կոչվում են՝ նորագութեաններ:

§ 117. Հին—Հայերէնի մէջ նախադրութիւնները շատ էին եւ դրվում էին գոյականից նախադաս. այս է պատճառը, որ նոքա կոչվում էին նախադրութիւն: Նոր—Հայերէնի մէջ նախադրութիւնները սակաւ են եւ գլխաւորապէս գոյականից յեղադաս են դրվում:

§ 118. Միեւնոյն բառը կարող է եւ նախադրութիւն լինի, եւ մակբայ: Եթէ բառը գոյականի մօտ է դրուած, նա նախադրութիւն է, իսկ եթէ բայի մօտ, առանց գոյականի, նա մակբայ է:

—Վէրան կանգնեց: Տակը գնաց: Մօրունականցաւ: Հետը մի գնաք: Ի՞նչպէս էք ապրում:

Թ. Շ. Ղ. Կ. Ա. Պ.

§ 119. Կան բառեր, որոնք այլ եւ այլ նախադասութիւններ կամ միեւնոյն նախադասութեան այլ եւ այլ անդամները կապում են միմեանց հետ:

Դոքա կոչվում են շաղէտպ: — Իսկ, բայց, որ, եւ, ու, կամ, այլ, թէ, էլ, մանաւանդ թէ, սակայն եւ այնպէս, թէեւ, նաեւ, այսու ամենայնիւ, ոչ միայն...

Ժ. ԶԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ.

§ 120. Այն բառերը, որոնք մարդուս հոգեական զգացմունքներն ու կիրքն են արտայայտում, կոչվում են ձայնարկութիւն կամ միջարկութիւն: — Էյ, այ, ո՛խ, ախ, աւազ, երանի...

§ 121. Բանի—մասունքները տասն են՝ գոյական անուն, ածական անուն, թուական անուն, գերանուն, բայ, գերբայ, մակբայ, նախադրութիւն, շաղկապ եւ ձայնարկութիւն:

III. ԲԱՐԱԿԱՁՄՈՒԹԻՒՆ *

Արմատ և վերջաւորութիւն.

Հարժ, շարժ—առ, շարժ—ո՞յ, շարժական, շարժող—
լին, անշարժ:

Մեղ, մեղ—ք, մեղ—աւոր, ան—մեղ, անմեղութիւն,
մեղանչիլ, մեղանչական:

Առաջին տողի բաղր բառերում կրկնվում է շարժ
վանկը, երկրորդ տողի բառերում կրկնվում է մեղ վանկը:

§ 122. Միանման բառերի մէջ անփոփոխ
վանկը, որից շինվում են միւս բառերը, կոչվում է
արմատ: Արմատից յետոյ դրուած մասը կոչվում է
վերջառարանին:

162. Զեր դասի մէջ գտէ՛ք բոլոր բառերի արմատը:

Նախայար.

ա. Ցոյց, դատել, խոհեմ բերք, անուն:

բ. Աղացոյց, բաղդատել, ախոհեմ պերք, հաւա-
նուն:

Երկրորդ տողի բառերը շինուել են առաջին տողի
բառերից՝ սկզբից առնելով մի կամ մի քանի տառից
բաղկացած աննշան մասնիկներ:

§ 123. Բառի սկզբից կցուած աննշան մաս-
նիկները, որոնք նոցա սկզբնական նշանակութիւնը
փոխում են, կոչվում են նախայառ մասնիկներ:

*) Սկզբը առաջին մասի 29-րդ եւեսէց մինչև 58-րդ եւեսը:

163. Հետեւեալ բառերի մէջ նախայարը ենթամնայով
բաժանեցէ՛ք և խմացէ՛ք թէ նա բառին ինչ նշանակութիւն
է տալիս:—Մարդ ես—մարդ չես, կայ—չկայ, ծառերի
բերէ՛ հաւաքեցէք: Հրէից մէջ չըերք կանայք յարգանք չէին
վայելում: Անանուն, անխոնեմ, անեղն Աստուած, տգեղ,
տմարդ, տձե, տհաս, տկար, ակամայ, ածուխ:

164. Արտադրեցէ՛ք և նախայարները դուրս բերէք
տետրակի լուսանցքը:—Առ—արկայ, առարկել, առանձին,
առանձնանալ, առանձնութիւն, առողջ, առողջութիւն,
առտնին, առհասարակ, առաւել, առաւելութիւն, արտա-
դրել, արտադրել, արտասանել, արտաբերութիւն, արտուղի,
արտուղութիւն, արտասուզ, արտահանել, արտաթորել,
արտադրած, արտահալած, բաղդատել, բաղդատութիւն,
բաղդատող, բաղկանալ, բաղդադրութիւն, բաղաձայն, բա-
ցառիկ, բացադրել, բացայաց, բացօդեայ, բացաճակ,
բացաշկարայ, բացորոց:

165. Գերակիռ, գերապանծ, գերբնական, գերմարդ-
կային, գերագոյն, գերադրական, գերանուն, գերասան,
գերբայ, ենթակայ, ենթարկել, ենթարկող, ենթամնայ,
ենթադրութիւն, հակասել, հակածառութիւն, հակառակ,
հակադիր, հակադարձ, հակամիտ, համամիտ, համափրա,
համադոյ, համաձայն, համախոն, համաէր, համազգի, հա-
մասեռ, համարուեստ, համագործ, համակրել, համակրանք,
համակրութիւն, մակառ, մակդիր, մակրայ, մակաբերել,
մակարդակ, մակընթացութիւն, յարաբերութիւն, յարագնա-
ցութիւն, յարացոյց, յարանուն, յարակցիլ:

166. Ներկայ, ներհակ, ներշնչել, ներմուծել, ներա-
ծել, ներբան, շաղկապ, շաղկապել, շաղկարատ, շարադրել,
շարունակել, շարագրութիւն, պարբերութիւն, պարագայ,
պարունակ, պարունակութիւն, պարատական, պարփակել,
ստորագրել, ստորասական, ստորաբաժն, վերաբերիլ, վե-
րասասուցել, վերանորոգել, վերամբառանալ, վերականգնել,

վերստեղծել, վերընծայել. տարբեր, տարագիր, տարագնաց, տարագէպ, տարօրինակ. տրամաբան, տրամագիր, տրամախօս. փոխադրել, փոխաբերել, փոխանցանել:

Նախայարները կարգով արտագրեցէ՛ք և նոցանից նշանականները աննշաններից զանազաննեցէ՛ք:

Վերջայար.

ա. Նաւ, հայր, հանձար, քար, դանձ.

բ. Նա-է, հայրի, հանձարէ՞ն, քարէ՞ն, դանձան-է:

Երկրորդ տողի բառերը չինուել են առաջն տողի բառերից՝ վերջեցը անշան մասնիկներ առնելով:

§ 124. Այն աննշան մասնիկները, որոնք կը գումար են բառերի վերջից եւ նոցա սկզբնական նշանակութիւնը փոխում են, կոչվում են վերջայար մասնիկներ:

167. Գտէ՛ք հետեւեալ բառերի վերջայար մասնիկները, գուրս բերէ՛ք ձեր տետրակների լուսանցքը և խմացէ՛ք թէ նոքա բառի մկզբնական նշանակութիւնը ինչ փոփուութիւն են տուել:—Երկնային, դաշտային, ձմերախին, ամարացին, հիւսիսային, հարաւային, աստուածային, մարդկային: Արևելեան, արևմտեան, Հայկեան, Արամեան, Թորդուան: Խշանական, գեղջլական, գաւառական, գիւղական, գժոխական, քաղաքական, գիւղական: Թղթեայ, քաջեայ, քրիստոնեայ, քրիստոնեան, արևմտեան: Հոգեպէն, լուսեպէն, մաեպէն, կանաչեպէն, խմորեպէն, ոսկեպէն, կաւեղէն, հողեպէն, փայտեպէն: Զըի, աղի, արժանի, մոլի, երկասպի, ջրարբի, պղնձի, արծաթի, երկաթի, կաղնի (ծառ), կաղամախի, ծիրանի, սալորի, թթենի, ընկույնի, նունենի, նշենի, խնձորենի: խողինի (միս), առիւծենի, գայլենի, գառնենի (մորթ):

168. Նախընթաց (167) վարժութեան վերջայարները ջնջեցէ՛ք և բառերը իրանց սկզբնական ձևին վերածեցէ՛ք—ածականը գոյական դարձէ՛ք:—Երկինք, դաշտ, ձմեռ և այլն:

169. Հետեւեալ օրինակների մէջ վերջայարների տակը գիծ քաշեցէ՛ք և խմացէ՛ք թէ բառին ինչ նշանակութիւն են տալիս:

— Հանճարեղ (հանճար ունեցող), զօրեղ, ուժեղ, թաթեղ, հանճարաւոր, թագաւոր, զօրաւոր, զինաւոր,— զինուոր, հոգեւոր, մարմնաւոր, ալսոր, ունսոր, չքաւոր, փայտաւոր, փայտաւոր, ձիւսոր, ոտաւոր, տնուոր, սպասաւոր, մոտաւոր: Ծակոտ, աղոտա, աղտեղի, ոսկրոտ, աղոտ, մսոտ, բորտա, եղոտ, նախանձոտ, երկչոտ, պարծենկոտ, ամաչկոտ:

170. Վերջայարները ջնջեցէ՛ք և ածական անունները գոյականի դարձէ՛ք:

171. Վերջայարները գտէ՛ք և խմացէ՛ք թէ նոքա բառին ինչ նշանակութիւն են տալիս:—Բնիկ, գուեհիկ, ոտուցիկ, թաթիկ, Աննիկ, Թաղիկ: Փափուկ, թափուկ, կոտրուկ, հեղուկ, հանելուկ, կապուկ, յեղյեղուկ, պարծուկ, անցուկ, զաղանուկ, կտրուկ, նստուկ, կարմրուկ, հեղուկ— հեղիկ, տաքուկ, պաղուկ, խորուկ— խորունիկ:

Պարփիկ, հնիփիկ, խափիչիկ:—Հեղիկ, մեղմիկ, քաղցիկ, անուշիկ, հայրիկ, մայրիկ, մանկիկ, թռչնիկ, ոտիկ, թաթիկ, Աննիկ, Թաղիկ: Փափուկ, թափուկ, կոտրուկ, հեղուկ, հանելուկ, կապուկ, յեղյեղուկ, պարծուկ, անցուկ, զաղանուկ, կտրուկ, նստուկ, կարմրուկ, հեղուկ— հեղիկ, տաքուկ, պաղուկ, խորուկ— խորունիկ:

Տեղացի, գիւղացի—գեղացի, դրաեցի, տնեցի, դաշտեցի, լեռնացի, քաղաքացի, գանճակեցի, մելանցի (եցի), Կարին—կարնեցի, Գառնի—գառնեցի, կորնթացի, Հայտատանցի:

Մանիքեցի—մանիքական, փարխեցի—փարխական,

իսրայէլացի—իսրայէլիան—իսրայէլական: Մտացի, խելացի:

172. Ի՞նչ բառերից են շինուել հետեւեալ ածական անունները:—Ներքին, արտաքին, յետին, միջին, վերջին, խորին, մթին, անջրդին, խաւարդին:

Հնոտի, սնոտի, օտարոտի, մեռելոտի, ցնցոտի:

Եղուու, ահարկու, հատու, յուժկու, վերակացու, ստնդու, խրատու, շինծու:

Մահացու, պահացու, մռացու, հալաւացու, զատկացու, տիրացու:

173. Հետեւալ վերջայարներն ի՞նչ նշանակութիւն են տալիս բառերին:—

Տնակ, բնակ, նաւակ, թիակ, որդեակ, հոգեակ, մանեակ, աղանեակ:

Բնդունել—ընդունակ, խառնակ, բոլորակ, մոլորակ, ճաշակ, դիտակ, վրիսակ, պտուտակ, էակ, էմասէ, ժողովէ, և բուժութակ, (նախատական են վերջին երեքը):

Շուրջ—շրջան, նիշ—նշան, կարկատել—կարկատան, զրկանի, իշխան, ծորան, խուժան, խածան, խրտան (խըրտընդ), վաղան—վաղկան, խոռվիկան, խթան, գուլ—զլան, տափան, ցաքան, կուսն, մղան, եղան, ջնջան:—Վարդանաք, թորոսանք, հօրանք, մօրանք:—Ութօրէք, ջրօրհնէք, տնօրհնէք, —տնօրհնանք:

Սողուն, թուզուն, սահուն, շարժուն, երերուն, գեղուն: Յարդինք, նախատինք, բաժինք:

174. Ես, ո՞ս և ի՞նչ վերջայար ունեցող դոյականները անորոշ դերայ դարձրէք:

175. Ի՞նչ բառերից են շինած հետեւեալ գոյականները:—Գոչիւն, մոնշիւն, հնչիւն, թնդիւն, սօսակիւն, սօսակիւն, շաշիւն, շառաշիւն:

Գոչումն, ողբումն, լալումն, սքանչացում, զարմացում, գղջում, հիացում:

Զօրանոց, աղբատանոց, հիւրանոց, փայտանոց,

Պրուանքանոց, փթանոց, լորանոց:

Ջմերոց, դպրոց, ծաղկոց, կանանոց:

Վոց, կտրոց, հատոց, քլոց, պրկոց, քերոց, կապոց, փաթթոց, ջարդոց, կտրտոց, փշտոց, պահարան, դեղարան, դարան, աղօթարան, գործարան, ննջարան, բնակարան:

Ծառաստան, բուրաստան, այգեստան, անդաստան, կուսաստան (կուսանոց), Հայաստան, Պարսկաստան, Ռուսաստան:

176. Օրսորդ, ձամբորդ, յաճախորդ, առաջնորդ, միջնորդ, յաջորդ, նախորդ, պահնորդ, բաժանորդ, ժառանգորդ, ձախորդ, ձախորդ, ուղղորդ, յետնորդ, փոխնորդ:

Պահապան, պարտիզպան, այգեպան, դռնապան, ջրաղացպան, ձիապան:

Գողունի, արքունի, Ամասունի, Արշարունի, Ռշտունի, Բզնունի, ծերունի:

177. Վերջայարները գտէ՛ք:—Գանձանակ, մրցանակ, եղանակ, կոչ—նակ, խոտորնակ:

Մատանի, հարսանի+, հովանի+: Լեզուանի, սլիտանի, եռոտանի, երեքոտանի:

Թագունի, Ֆիզբանունի, կոմսունի, քանանունի, հայկունի, Սբբունի, սրբունի, բարեկաշտունի, աղնուունի:

178. Ծնունդ, սնունդ, ժողովուրդ, խառնուրդ:

Դեղնուց, սպիտակուց, նեղուց, էգուց: Ուրաստ, իմաստ, զգաստ, զգեստ, պահեստ, դովեստ, հրաժեշտ:

Թագուստ, փախուստ, սպրուստ, գալուստ, հագուստ: Սուրբ—սրբազնն:

179. Մակրայակերտ վերջայարներ:—Լալագին, ուժին, ողբագին, սրտագին, ցաւագին: Բոնցի, աքացի, մագլցի: (*)

*) Տես մակրայների մէջ:

Ուղղակի, կողմնակի, չեշտակի, յանկարծակի, թեքակի:

§ 125. Շատ անգամ վերջայարն ընկնում է արմատի եւ վերջաւորութեան մէջ, մանաւանդ բայերում, օր. տեղ-առ-պ-ել, շնորհաւորել, դիմաւորել, զգեստաւորել, հարկաւորիլ, վերջաւորիլ—վերջաւորուիլ, ջր-ոս-ել, մրճոտել, աղտոտել, կեղտոտել, ժանգոտիլ:

§ 126. Պատահում է երբեմն, որ վերջայար մասնիկը չի փոխում բառի նշանակութիւնը:

Արքունի—արքունական, անմեղ—անմեղական, պատրաստ—պատրաստական, թշուառ—թշուառական, տէրունի—տէրունական, հայրենի—հայրենական, արժանի—արժանաւոր, հեռու—հեռաւոր, մօտ—մօտիկ, մօտաւոր: Խոր—խորին, դժուար—դժուարին: Պիտանի—պիտանացու, ժառանգ—ժառանգորդ, յառաջաբան—յառաջաբանութիւն, քանակ—քանակութիւն:

§ 127. Կան մի քանի վերջայարներ, որոնք ընկնում են բայերի արմատի եւ վերջաւորութեան մէջը եւ գործողութեան մանր կրկնութիւնը կամ անընդհատ տեւողութիւնն են ցոյց տալիս:

180. Թուչիլ, թուչտիլ, կտրել, կտրտել, կտրատել, կոտրել, կոտրտել, կոտրատել, պատուել, պատուտել, պատուտորել, խոցել, խոցոտել, կրծել, կրծտել, կոռտել, կոռտուել, չարչարտել, հանոտել, ցանոտել, կծոտել, խածոտել, ձանկոտել քաշկոտել, խառնել, խառնշտորել, յօշել, յօշոտել:

Նախատիպ և ածանցական բառեր.

§ 128. Այն բառերը, որոնք նախայար եւ վերջայար մասնիկներ չունին, կոչվում են նախատիպիկ: Խոկ մասնիկներ ունեցողները կոչվում են ածանցական բառեր:

§ 129. Ածանցական մասնիկները, ինչպէս տեսանք, կցվում են բառի սկզբից կամ վերջից. Բայց նոքա կարող են ընկնիկ նաեւ արմատի ու վերջաւորութեան մէջ (§ 127):

Պարզ և բարդ բառեր.

§ 130. Եթէ բառը մի արմատ ունի, նա պարզ է կոչվում: — աչք, ձեռք, ծառ:

Եթէ բառը երկու արմատ ունի, նա բարդ է կոչվում: — աչք-ա-կապ, ձեռն-ա-սուն, ծառ-ա-տունկ:

Երկու արմատ միմեանց հետ կապող տառը կոչվում է յօդակիտպ:

§ 131. Բառերը բարդվում են երեք կերպ: Երկու բառ կցվում են իրար առանց յօդակապի՝ — արիւն-լուայ, կրծ-կալ, սուտ-գրոյց, քմ-ծիչալ, տն-օրհնէք, հայթուս, լուացարար, ձեռնթափ...

Բ. Երկու բառ կցվում են իրար և յօդակապով:

տն-ա-շէն, նաւ-ա-բեկ, հայրասպան, նաւապետ,
քայլափոխ, ծառատունկ, հաստավարանոց...*)

գ. Երկու բառ կցվում են իրար և շաղկա-
պով՝ ահուդող, աղուհաց, կերուխում, տակնուվրայ,
ջարդուբուրդ:

Կորուսման և փոփոխման գլխաւոր կանոնները.

§ 132. Բարդութեան եւ ածանցման ժամա-
նակ ձայնաւոր տառերից ոմանք դուրս են ձգվում,
փոփոխվում են.

Ա. Կորուսմամբ՝

§ 133. Բառը բարդելիս կամ ածանցելիս՝
երբ հարկ լինի նախընթաց վանկի բազաձայնը յա-
ջորդ վանկին տալ, ապա միայնակ մնացող ձայնա-
ւորը պիտի վերանայ, եթէ և, չ ձայնաւոր է:

181. ա. Մաքուր, մաքուրել=մաք—բել, ամուր—
ամբացնել, մուր—մրուել, մուշ—մշեցի, մուգ—մզանալ,
անասուն—անասնական, դարուն—դարնան, տուն—տնա-
յին, բուն—բնակարան, երեսուն—երեսնական, լուծ—լծած,
լծել, լծորդ, բազում—բազմութիւն, տիսուր—տիմութիւն,
աշուն—աշնանային, քուն—քնել, տրտում—տրտմած:

բ. Գիր—գրել, գրութիւն, գրասէր, գրասպարժ, կիծ

*) Եթեմ այս յօդականի տեղ հանդիպում է եւ յօդակապը՝
հաշուետուն, հաշուետես, հաշուեկալ...

—կծել, կծող, կծու, զիծ—զծել, զծող, զծագիր, բժիշկ—
բժշկել, բժշկութիւն, բժշկական: Պարսիկ—պարսկերէն,
պարսկահայ, հնդ—կացի, տաճ—կամոլ, ուամ—կական,
բոր—կանալ, մօտ—կանալ, աղջիկ—աղջկան, մանուկ—
մանկական:

§ 134. Մնացած ձայնաւորների վերաբերու-
թեամբ այս կանոնը պարուաւորեցուցիչ չէ.—բերան,
բեր-նի, բերանի, քաղաք, քաղ-քի, քաղաքի, քաղ-
քլցի, քաղաքացի, աւել, աւելի, աւելել, աւեր,
աւերել, աւրել:

§ 135. ի եւ և տառերով սկսուած միավանկ-
ներն եւս չեն հետեւում վերեւի կանոնին.—իր—
իրական, իժ—իժակորիւն, ուզտ—ուզտապան, ուժ—
ուժերորդ:

§ 136. Բարդութեանց ժամանակ՝ եթէ յօ-
դակասպը դուրս է ընկած, բազաձայնը առանց յա-
ջորդ վանկին տալու էլ, նախընթաց ձայնաւորը
կորչում է.—զուր եւ պարտել՝ դառնում է զըր-
պարտել, փոխանակ՝ զրապարտել, սրտ-մաշուք—
սրտամաշուք. քմ—ծիծաղ—քամածիծաղ. տնտես,
ջրկիր, ջրհոր, ջրհոս, գրեաց, հացթուխ, քթկալ:

Բ. Փոփոխմամբ՝

§ 137. Ածանցման ժամանակ, նոյն կանոնի
հիման վերայ, է ձայնաւորը փոխվում է չ ձայնա-
ւորի, ա երկբարբառը դաւնում է և, ես երկբար-
բառը պարզ է, իսկ է երկբարբառը փոխվում է

»»: Միեւնոյնն է լինում եւ բարդութեանց ժամանակ:

182. ա. Սէր, սիրել, սիրելի, եղբայրախրութիւն, դէտ, դիտել, դիտարան, դիտակ, դիտաւորութիւն: Կէս, կիսել, կիսանջ, կիսատ: Դէզ, դիզել, դիզած: Պէս, պիսակ, պյանպէս, պյանփիսի. որպէս, որպիսի, որպիսութիւն. պէսպէս, պէսպիսագրյն:

բ. Լոյծ, լուծել, լուծողական. բոյս, բուսական, յոյս, յուսահատ, յուսալի, յուսարէկ. լոյս, լուսաւոր, լուսատու, լուսեղէն, լուսարեր. գոյն, գունաւոր. ծոյլ, ծուլութիւն, ծուլանալ, ծուլասիրտ. կոյս, կուսական, կուսասատան:

գ. Ատեան, ատենի, ատենակալ, ատենադպիր, մատեան, մատենի, մատենագիր, մատենասէր. վայրկեան, վայրկենական:

դ. Պատիւ, պատուել, պատուական, պատուասէր, անպատուել, պատուաւոր. ազնիւ, ազնուական, ազնուութիւն, ազնուազարմ. կուիւ, կուռարար, կուռասէր. թիւ, թուել, թուարէկել, թուական, թուահամար:

§ 138. Բարդութեանց եւ ածանցմանց ժամանակ + տառը դուրս է ձգվում, եթէ նա արմատական չէ. իսկ եթէ արմատական է, չի կարող դուրս ձգուիլ: — Խելք, խել-ացի, խելօք, խելահատ: Մեղք, մեղաւոր, մեղւպարտ. փառք, փառաւոր, փառասէր:

Բացառութիւն են՝ հանք (հանքային), փորձանք (փորձանքաւոր), մեղք (մեղաւոր և մեղքանալ):

§ 139. Բառերը՝ ածանցուելիս կամ բարդուելիս, մեծ մասամբ յօդակապով են բարդ-վում կամ ածանցվում: (§§ 130, 131): Յօդակապ չի դրվում՝ ա. Երբ ածանցական մասնիկը կամ բառը

ձայնաւորով է սկսուած՝ հանձար-եղ, ուժ-եղ, մնեղէն, ազտեղի, հայրենի:

բ. Է վերջացած բառերը ածանցուելիս և յօդակապ չեն առնում, այլ և եւ չ տառերից կազմվում է և յօդակապը՝ հոգի-աւոր=հոգեւոր, տարի, տարեկան, կողի-կղզեցի, գինի-գինեւէտ, որդի-որդեսէր:

գ. Երբեմն է կորչում է՝ եկեղեցի-եկեղեցական, պիտանի-պիտանացու:

դ. Միավանկ բառերը չ պահում են. — մի-միանալ, թի-թիաւոր, դի-դիակ, դիակակիր, «րէ»—որդիական, կոշի-կղզիանալ, ձի-ձիաւոր, ձիարշաւ:

183. Հետևեալ բարդ բառերից պարզ բառեր կաղմիցք: — Առիւծափրտ, առիւծակեր, առիւծակուր. չնազումս, չնաձագ, չնապահ. մարդանէր, մարդակիր, մարդապան, հայրախնամի, հայրագորով, հայրագութ. արինկպակ, արիւնուուշտ, արիւնարբու, արիւնլուայ, ստունափրտ, ստունարիւն, ստոնակերպ, մեծասիրտ, մեծանողի, մեծափործ, մեծարան. քաղցրասէր, քաղցրածայն, քաղցրաբէր, քաղցրախոս. երկայնաթաթ, երկայնարազուկ, հաստուպարանոց. լայնաթիկունք, ովլսաբաց, պնդերես, աչքածակ:

Ցլամարդ, կնամարդ, ընձառիւծ, այծեղջիւր, ազգատոհմ, այրուձի, առուտուր, կերուխում, ստուլիս, վար ու ցանք:

184. Դիւրասան (դիւրաւ սահող), արագագնաց, հեշտակու—ինքնաեւ, մշտագալար, հրչչ, մկնորս, թուչնորս, ջրկիր, ջրեր, մատենագիր, օրէնտղիր, օրէնտղէտ, ծնողա-

սէր, ծնողատեաց, եղբայրասպան, եղբայրասէր, այսահար, դիւահար, լեղապատառ, սրտաճագ:

185. Հետեւեալ բարդութիւններն ինչպէս են կադմուել:—Պող, դողալ, դողդողալ, չափ, չափել, չափչփել, թափթփել, ծակծկել, ծըփծփալ, չորով, չորչով, չփել, չփշփիկ, հեծել, հեծեծել, (հեծահեծել), կցել, կցկցել, շջըրջել, վազգել, չարչարել, չարչարանք, այլայլել, հարհարել, միտ, մտմտալ, վառ, վառվառուն, վայլ, վարվառուն, թրթռալ, մրմուալ, գրգուալ, ճրճուալ, հրհուալ, խմալալ, պալաւալ, ճըմուալ, խշխալ, քչքչալ, քձըձել, քջըջել, քրքրել:

2արաջար, մեծամեծ, գունդագունդ, գոյնգոյն, այլայլ, աղաւաղ, ծուռումուռ, սուտումուտ:...

IV. ՄԱՍԱՑ-ԲԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Գոյական անունների փոփոխութիւնը.

Բար ջրային թռչուն է:—Ենթակայ:

Բարէ ոտները թաղանթոտ են:—Որոշող:

Բարէն կուտ են տալիս:—Երկ. լրացնող (ումը):

Որսորդն սպանեց այն բար:—Բուն լրացնող:

Բարէն պոկոտեց փետուրները:—Երկ. լրացնող (ումից):

Բարէն յագեցրեց իւր քաղցը: Երկ. լրացնող (ումով):

Բարէն լողալու շնորհք կայ:—Երկ. լրացնող (ումնում):

Վերլուծելով վերսիշեալ նախադասութիւնները, մենք անուում ենք՝

ա. Բար բառը նախադասութեան մէջ կատարեէ է զլիսաւոր և երկրորդական անդամների պաշտօն:

բ. Եյլ և այլ պաշտօն կատարելու համար նա փոփոխել է իւր վերջաւորութիւնը, բայց չի ածանցուել:

§ 140. Անունների վերջաւորութեան փոփոխութիւնը կոչվում է հոլիք:

Անունները եօթը ձեւով միայն կարող են փոփոխել իրանց վերջաւորութիւնը, ուրեմն հոլովներն էլ եօթն են:

Իրանց կատարած պաշտօնին նայելով, հոլովները լինում են՝ «ողական», «եռական», «բական», «հայցական», «ապահական», «ուրժիական», «երդայական»:

Բոլոր հոլովները միասին առած՝ կոչվում են հոլիքնումն:

ա. Սագը, աղաւնի—ն և ձուկը ողնաւոր կենդանիներ են:

բ. Սադէ սպանում և չի—ն մարմինները նման չեն իրար:

Նշանակեալ բառերը նախադասութեան մէջ միեւնոյն պաշտօնն են կատարում—որոշող են. բայց նոցա վերջաւորութիւնը միատեսակ չի փոփոխուել, այլ տարբեր (է, ու, ան):

§ 141. Անունները երեք ձեւով են փոփոխում իրանց վերջաւորութիւնները:

Փոփոխման տարբերութիւնը նկատվում է սեռական հոլովի մէջ:

Սեռական հոլովի վերջաւորութիւններն են՝ ի,
ու, ան, (Եան):

Մնացած հոլովները կազմվում են սեռականից եւ ուղղականից:

Ուղղական և Հայցական.

§ 142. Անուան անփոփոխ ձեւը կոչվում է ուղղական հոլովի:

Ուղղականը նախադասութեան մէջ միշտ ենթակայ է. բայց նա օժանդակ բառերի հետ կարող է եւ ստորոգեալի պաշտօն կատարել: — Սահը, աղաւանին և Յա-իլ ողնաւոր հենդանիներ են:

§ 143. Հայցական հոլովը ձեւով նման է ուղղականին:

Հայցական հոլովը նախադասութեան մէջ կատարում է բուն լրացնողի պաշտօն: — Ձկնորսը բըռնեց յա-իլ: Որսորդը հրացանով սպանեց առաջ եւ աղաւանի: Նա ունի արքի:

§ 144. Հայցական պէտք է համարել եւ այն անունը, որ ուղղականի ձեւով ցոյց է տալիս գործողութեան տեղը: — Ես գնացի (ուր) տուն, ուսումնարան, պարտէզ, այգի...*):

Ուղղական հոլովին իմացվում է հարցերով՝ ի՞նչ իսկ հայցականը՝ ո՞ւ, ի՞նչ եւ ո՞ւ:

*) Գրաբարի նախադասութականը, որ աշխարհաբարում նախաւըեց զրկուելով հայցականի ձեւ է ստացելու դրաբարի մէջ ես հայցականը կատարել է շատ անդամ տրականի պաշտօն:

186. Վերլուծեցէք հետեւեալ նախադասութիւնները և գալէք ուղղական և հայցական հոլովները: — Նադասառիւ երկշում է: Կարուն չորքուանի ընտանի ինդանի է: Ծառը ունի շատ սարեր, ուեւնաւը ու ծաղիներ: Մանուշակը անուշ հարունի: Կարուն յա-իլ բունեց: Հա-ը ուսում է կու-ս: Վարդ ծաղինի է: Աշուները ամառը գե-րը գնաց: Գի-ու շինած է սարի վերաց: Սարը բարձր է: Մարդիկ անցկացան քերը: Վարպետը շինում է մատանի: Ուկին թանկ է: Ես ուկի շունիմ: Խաղողը համում է աշնանը: Գիշին սննդարար խմիչք է: Շունը պահպանում է քա-նը, հօրը և զիւղացու հարստութեանը: Շունը հալածեց քայլը: Ուսուրդն սպանեց քայլը: Տարբին ունի տասներկու առի: Ամէն ունի չորս շաբան, իսկ շաբանիլը — եօթն չը: Աշուները վերցրեց քրեւերը և գնաց առանձնաբան: Աշուները չգիտէք դասը:

Սեռական և տրական.

§ 145. Անուան այն ձեւը, երբ նա ցոյց է տալիս, թէ առարկան ա-ման է կամ ինչին է, կոչվում է սեռական հոլովի:

Սեռական հոլովը պատկանելութիւն ցոյց տուող որոշողի պաշտօն է կատարում: — Սագի, աղաւան, ձկան մարմինը . . . սենեակի, եկեղեցաւ, տան պատկերը. . . խաղողի, գինաւ, նուան համը. . .

§ 146. Եթէ գոյական անունը ձեւով նման է սեռականին, բայց նախադասութեան մէջ երկրորդական լրացնողի պաշտօն է կատարում եւ ոչ որոշողի, կոչվում է արտիան հոլովի:

Տրական հոլովը ցոյց է տալիս թէ ա՛մ կամ
է՞նչին ենք մի որեւէ բան տալիս:

Տրական հոլովը ձեւի կողմից որոշող յօդով է
միայն զանազանվում սեռականից: Խոհարարը ու-
նեցած փողերը տուեց սաժի, աղաւասու, յիան: Վա-
ճառականը խաղողին, գինաւան եւ նուանը մտիկ էր
տալիս՝ գնելու նպատակով: — Ոտո քարին կրդիազիւ:
Գլուխդ քարին տուր, երեսդ պատին:

Տրական հոլովը շատ անգամ պարագայակա-
նի մտքով էլ է վարփում: Սարի լանջին արածում
էր հօտը: Հրացանը յեւէն՝ դուրս եկաւ սրբի: *)

187. Հետևեալ օրինակների մէջ գտէք սեռական և
տրական հոլովները: — Աշխերաք գիլքը գեղեցիկ է. ես աշ-
խերաք տուի: Գրի կազմը չինած էր գունաւոր թըղ-
թից: Կազմին բառական փող է տուած: Սևին սապոնը, իւնին
խրատն ինչ անի: Կուշտը սալաշին մանր կըրբթի: Յաշնա-
նէս եղբայրը զնաց ուսումնարան: Խաղ անելիս՝ ոստ առքին
դիպաւ: Աշակերտներն ասացին Յիւսուսին, որ աղօթել սո-
վորեցինք: Յիւսուսի աշակերտները հասկերը կորցում էին և
ուսում: Աշակերտը վարժապետին մի փունջ ծաղիկ ընծայեց: Վարժապետը աշխերաք մի գիլքը տուեց: Մարտէնին ջուր
տուեք, ինչպէս որ տալիս էր ինուրանիւրին:

Ծիտն է ծառին, հաւն է թառին: Հովիւը մահակն
առանքին, սրինդը բերանին ուրախ սրտով նայում էր իւր ապ-
րանքին: Այն մարդը մէջին գօտիկ ունի կապած, սուներին
արեխ: Ակնոցը աչին, գուշաղնին յենած, ծերունին դանդա-
դութեամբ յառաջ էր գնում:

*) Գրաբարի նախորդիւ և նախորդիւ — վերջահոլով տրա-
կանի տեղը՝ հրացան է յեւէն: Եւ գօտի մաշկեղէն ընտ մէջ
իւր: Յորժամ դու յոր ելցես ազատն ի վեր ի Մասիս:

Բացառական, գործիական և ներգոյ-
ական հոլովներ.

§ 147. Բացառական է կոչվում անուան այն
ձեւը, որ ցոյց է տալիս, թէ մի բան ա՛մնից, է՞ն-
չից, ա՛րաւելից ենք սուանում:

Բացառական հոլովը կրաւորական բայերի մօտ
լինում է բուն լրացնող, իսկ միւս բայերի մօտ
երկրորդական լրացնող եւ պարագայական (արքէպէց
հարցի պատասխանը պարագայական է):

188. Գիւղացին կարեց ծառը: Ծառը կարուեցաւ գիւ-
ղացուց: Զենորսը ձուկը բռնեց: Ձուկը բռնուեցաւ ձկնոր-
սից: Հայրը որդուց նամակ ստացաւ: Ծառից պառող
քաղեցինք: Աղբիւրից ջուր խմեցինք: Ջրհորից ջուր են
հանում: Գետից առու է հանած: Ես վերադառնում եմ
քաղաքից:

Ցրուութիւնից ջուրը սառչում է, սաքութիւնից գո-
լորշինանում: Ծուլութիւնից մարդ միշտ մնաս է կրում:
Մշակները վերադարձան դաշտից: Սարից վաղում էր մէկ
կարկաչուն վուակ:

§ 148. Գործիական է կոչվում անուան այն ձեւը,
որ ցոյց է տալիս թէ մի գործողութիւն ա՛մնով,
էնչիւ ա՛մ կամ էնչի միջնորդութեամբ եւ էնչաղէս
ենք կատարում:

Գործիական հոլովը նախադասութեան մէջ
լինում է երկրորդական լրացնող եւ պարագայա-
կան: — Գիւղացին ծառը կարեց իտցնուի: Ես կար-
դում եմ աշխարհական (ինչպէս):

189. Մարտակը հնձում են խոտն ու ցորենը: Մեր պարտէզը միքն է պատաստու ծառերով: Աշնանը երկրագործի կարասները լցում են զինով, ամբարներն ավելով ու ցորենով, իսկ մառանները տեսակ տեսակ պտուղներով:

Գիշերով (Երբ) մեր տունը հիւր ելաւ: Օրը ցերեկով դողիքը մտան տուն և կողոպտեցին: Հայերը քաջութեամբ ընդդիմացան պարաիլներին և պատուով պաշտպանեցին իրանց հայրենիքը: Ուշադրութեամբ (Բնչպէս) լսեցէք ձեր վարժապետին և ճշգութեամբ կատարեցէք նորա պատուէրները:

§ 149. Ներգոյական է կոչվում անուան այն ձեւը, որ ցոյց է տալիս, թէ մի գործողութիւն ա-մ-ն-ա-ս-, ի՞նչ-ո-ւ-, ո՞ր-ե-ղ է կատարվում:—Ժողովուրդը եկեղեցում աղօթում էր: Ի՞նչ-ո-ւ-ս այդքան ուժ- չկայ: Հոգու- ամեցական զօրութիւն կայ:

Ո՞-մ-ն-ա-ս եւ ի՞նչ-ո-ւ- հարցերի պատասխանը երկրորդական լրացնող է. իսկ ո՞ր-ե-ղ հարցի պատասխանը միշտ տեղական պարագայական բառ:

Կանոնաւոր հոլովմանց պատկերը.

§ 150. Բոլոր անունները սեռական հոլովի տարբերութիւն միայն ունին: Խեռական հոլովի կազմութեանը նայելով, բոլոր գոյական անունները չորս խումբի ենք բաժանվում: Խրաքանչիւր խումբը կազմում է մի հոլովումն:

§ 151. Առաջին խումբը կամ առաջին հոլովումն կազմում են այն անունները, որոնց սեռա-

կանը ուղղակի շինվում է ուղղականից՝ չ տառը կցելով վերջից:—Հաց—հացի, քար—քարի, սեղան—սեղանի:

§ 152. Երկրորդ խումբը կամ երկրորդ հոլովումը, բնդհակառակն, կազմում են այն անունները, որոնց ուղղականը չ ունի, իսկ սեռականում այդ չ-ն փոխվում է «»:—Ոսկի, ոսկու, գիւղացի—գիւղաց»:

§ 153. Երրորդ խումբը կամ երրորդ հոլովումն կազմում են այն բառերը, որոնք ուղղականում և տառն են ունենում կից որ եւ իցէ բաղաձայն տառի. սեռականում այդ «» տառը հեռանում է վերջին բաղաձայնից եւ իրանից առաջ առնում է «» տառը:—Զուկի—ձկուն. արիւն—արեան, մեծութիւն,—թեան:

§ 154. Չորրորդ հոլովումը կազմում են մի քանի ժամանակ ցոյց տուող անուններ, որոնք ուղղականում որոշ վերջաւորութիւն չունին, իսկ սեռականում ունենում են «» (կամ ուայ):—Օր—օրուն. ամիս—ամսաւան:

§ 155. Բոլոր չորս հոլովներն ել յոգնակի թւում միանման կազմութիւն ունին, այն է՝ առաջին հոլովման պէս սեռականում չ են առնում:

§ 156. Կանոնաւոր հոլովման մի օրինակ.

Եղակի.

Ուղ.	Հաց,	գինի,	արիւն,	օր.
Սէւ-	Հացի,	գինու,	արեան,	օրուան.
Տըակ.	Հացի,	գինու,	արեան,	օրուան.
Հայց.	Հաց,	գինի,	արիւն,	օր.
Բաց.	Հացից,	գինուց,	արիւնից,	օրուանից.
Գոլժ.	Հացով,	գինով,	արիւնով,	օրով:
				արեամբ:
Ներդ.	Հացում,	գինում; *)	արիւնում,	օրում:

Ցոգնակի.

Ուսող.	Հացեր,	գինիներ,	արիւններ,	օրեր.
Սէւ-	Հացերի	գինիների,	արիւնների,	օրերի.
Տըակ.	Հացերի,	գինիների,	արիւնների,	օրերի.
Հայց.	Հացեր,	գինիներ,	արիւններ,	օրեր:
Բաց.	Հացերից,	գինիներից,	արիւններից,	օրերից.
Գոլժ.	Հացերով,	գինիներով,	արիւններով,	օրերով:
Ներդ.	Հացերում,	գինիներում;	արիւններում;	օրերում:

190. Արմատական հոլովներ ընդունելով ուղղականն ու սեռականը, գտէք մնացած հոլովների կազմութիւնը՝ ա-

*) Գործիական և ներգոյական հոլովները շատ անդամ ուղղականի չ տառը պահում են՝ գինիով, մատանիով. գինիում, մատանիում:

ուաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ հոլովման մէջ առանձին առանձին:

191. Առաջին հոլովման տակ հոլովեցէք հետևեալ գոյական անունները եղակի և յոդնակի՝

ա. Վարդ, դաշտ, բաղդ, ջուր, ծառ, հոն, տանձ, գանձ, փիղ, զօլք:

բ. Բաժակ, կացին, դանակ, սեղան, աթոռ, սղոց, խարսոց, անտառ, տերե, արե, ագռաւ, աղուէս, մողէս, բանակ, զինուոր, բժիշկ, պատկերահան:

գ. Ոտ, ձեռ, մատ, մաս (ոտը, ձեռը), ոտներ, ձեռներ:

դ. Յարութիւն, Համբարձում, Ամբակում, Մկրտում, Մելքում. . .

ե. Հայելի, ածելի, բանալի, Գարիբալդի, Անի, Նապօլի (հայելի, ածելի):

զ. Թուն, թուչուն, սողուն, գեռուն. . .

192. Երկրորդ հոլովման տակ հոլովեցէք՝

ա. Եկեղեցի, աղաւնի, մատանի, զինի, ձիթենի, խնձորենի, կեռասենի. . .

բ. Թի, ձի, դի:

գ. Կարգալ, զրել, խօսիլ, ուրախանալ, զարմանալ...

դ. Մարդ, *) Աստուած:

ե. Քաղաքացի, դաշտեցի, սարցցի, Հայաստանցի, Պարմաստանցի, կարճեցի, երևանցի (հոլովեցէք միայն եղակի թուու):

193. Երրորդ հոլովման տակ հոլովեցէք՝

ա. Շուն, առուն, ձուկը, նուռը, եղը, դուռը, մուկը, թոռը, ծունկը...

բ. Արիւն, ծնունդ, ժողովուրդ, անուն, գարուն, աշուն:

*) Մարդ բառի յոդնակին անկանոն է՝ մարդեկ, մարդ-

գ. Խաւարումն—խաւարման, կործանում, հարցում, խոսում, օժում. . .

Յոդնակին՝ խաւարումներ կամ խաւարմունքներ, հարցումներ կամ հարցմունքներ. . .

դ. Աշխատութիւն, աշխատութեան, աշխատութեամբ, մեծութիւն, զօրութիւն, քաջութիւն, նուաստութիւն, առաքինութիւն, մոլութիւն, խնայողութիւն, դեղիտութիւն, շոայլութիւն. . .

194. Ում, իւն և նիւն վերջացած բառերը հոլովեցէք անխափը և առաջին հոլովման պէս:—Նրիւն, արիւնի, արիւնից, արիւնով, աշխատութիւնի, աշխատութիւնով, հարցումի, հարցումով:

195. Զորբորդ հոլովման տակ հոլովեցէք՝

ա. Ժամանակ, տարի, տարս, շաբաթ, առաւօտ, իրիկուն, կէսօր, տանու, ձմեռ, ցերեկ, դիշեր, անդամ, հիմակ, առաջ, հերու, երէկ, վաղը. . .

բ. Մահ, մահուան, ինիչ, աղջիկ:

գ. Զորբորդ հոլովման բառերից մի քանիսը հոլովեցէք և առաջին հոլովման տակ:

Անկանոն հոլովմունք.

§ 157. Կան մի քանի անուններ, որոնք եղակի թւում անկանոն են հոլովմում, իսկ յոդնակի թւում կանոնաւոր. Կան եւ այնպիսինները, որոնք եղակիում կանոնաւոր են, իսկ յոդնակի ուղղական եւ սեռական հոլովները անկանոն ունին:

§ 158. Եղակիում անկանոն հոլովմուղ անուններն են՝

Ուղ. Հ.	Հայր.	քոյր.	սէր.
Ս. Տ.	Հօր.	քրոջ.	սիրոյ.
Բայ.	Հօրից.	քրոջից.	սիրուց.
Գայծ.	Հօրով.	քրոջով.	սիրով.
Նէրժ.	—	քրոջում:	—

ա. Հայր բառի պէս հոլովեցէք՝ մայր, եղբայր, նախահայր, նախամայր և այլ բարդութիւնները:

բ. Քոյր բառի պէս հոլովեցէք՝ Տէր, կին, տիկին, տալ, աներ, ընկեր:

գ. Սէր բառի պէս հոլովեցէք՝ Աստուած, առւրբ, սուր, լոյս, (սրբից, սրից, լոյսից, լուսից):

196. Որոշեցէք հետևեալ նախադասութիւնների մէջ նշանակուած գոյականների հոլովական տարբերութիւնը:—Ես մի նականէց երեք հաւ գնեցի: Դու միւս նուջից հարիւր ձու գնեցիր: Իմ ընէրք դրբերը շատ են, քո ընէրքը դրբերը սակաւ: Յովհաննէսի աներոջ որդին քո առլոջ հետ մեզ մօտ եկաւ: Կարասիսի անք որդին և առլոջ տղան էլ ավախ գան: Պարտիզի անրոջից խնդրեցինք, որ մեզ ընդունի: Տէրէց մի նամակ ստացայ:—Այս կնոջ այլը մի բարի մարդ է: Այս այլ միջից մի գազան դուրս եկաւ: Մայրը հոլում է իւր որդիների պէտքերը: Մայր ծառը աճում է շատ երկար տարիներ:

§ 159. Յոդնակիում անկանոն հոլովմուղ անուններն են.

Ուղ. Հայր, Հրէայր, Յոյնք, Մամիկոնեանք, Սրշակունիք, Կարնեցիք:

Սէւ. Հայոց, Հրէից, Յունաց, Մամիկոնեանց,
Արշակունեաց, Կարնեցոց:

197. ա. Հայոց գոյականի պէս հոլովեցէք՝ տղայք, որ-
դիք, երեխայք, ասորիք, պահք:

բ. Յան+ բառի պէս հոլովեցէք՝ ծնողք—ծնողաց,
ոռուք, քուրդք, մոնդուք, հոնք, չէչնք, լեհք:

գ. Մամիկոնեանք բառի պէս հոլովեցէք՝ ա. բոլոր
էան վերջացած ցեղի և ազգի անունները յոդնակի թւում,
դ. երրորդ հոլովման նէն՝ վերջացած բառերի յոդնակին
նէն+՝ աշխատութիւնք,—թեանց և գ. նոյն հոլովման ու+
վերջացած բառերի յոդնակին—նուն+՝ ուսմունք, ուսմանց.
նաև աղջուն+—անց, հանայ+—անց:

դ. Հրէոյ+ բառի պէս հոլովեցէք՝ ծառապք:

ե. Արշունիչ+ բառի պէս հոլովեցէք՝ բոլոր ունի+
վերջացած ածանցականները—Ռշտունիք, Խոռխոռունիք,
Մանդակունիք...

գ. Կարնեց+ բառի պէս հոլովեցէք՝ բոլոր էօն վերջա-
ցած ածանցների +—ով յոդնակին՝ քաղաքացիք, գիւղացիք,
մանկեցիք, սաղուկեցիք. . . .

§ 160. Յոգնակիում անկանոն հոլովուող բո-
լոր անունները կարող են առնել նէր յոգնականա-
կերտ մասնիկը եւ կանոնաւորապէս հոլովուիլ առա-
ջին հոլովման տակ:—Հայեր, Հրէաներ, Յոյներ,
Մամիկոնեաններ, Արշակունիներ, Կարնեցիներ:

§ 161. Կորուսման կանոնին համաձայն՝ գոյ-
ական անուններից շատերը, հոլովուելիս, վերջին
վանկի ձայնաւորը կորցնում են, մանաւանդ է,
ու+ ձայնաւորները: Յոգնակի թւում կորուսման
կանոնը հազիւ է գործադրվում:—Քիթ, քթի,
օգուտի, սէր, սիրոյ...

198. Հոլովեցէք՝ ա. երկիր, գետին, կաղին, սիրտ,
գաւիթ, գիր, մոխիր, գիրք, միրդ, միս, մարմին. . .

բ. Օգուտ, հարուստ, ջուր, ձուկը, թուղթ, պտուղ
կերակուր, մուկը, դուռը, նուռը, փուռը, ուսում, ժողո-
վուրդ. . .

§ 162. Փոփոխման կանոնին համաձայն՝ գոյա-
կան անուններից ոմանք, հոլովուելիս, վերջին ձայ-
նաւորը փոխում են: Յոգնակի թւում փոփոխման
կանոնը չի գործադրվում:

199. Հոլովեցէք՝ հանդէս—հանդիսի, սէր—սիրոյ,
էշ—իշի, Յովհաննէս—Յովհաննիսի (և Յովհանննէսի):

Հոլովեցէք՝ պատանեակ—պատանելի, վայրկեան—
վայրկենի, գեհեան—գեհենի, վառեակ—վառելի, (վառիկ—
վառիլի):

Հոլովեցէք՝ հաշիւ—հաշուի, թիւ—թուի, հովիւ—հո-
վուի, պատիւ—պատուի:

Հոլովեցէք՝ լոյս—լուսոյ, սառոյց—սառուցի, հան-
դոյց—հանդուցի. . .

Անուան յօդը.

200. Ես իւնուն մտայ և հարդ տեսայ:

Ես իւնունը մտայ և դ հարդ տեսայ:

Առաջին նախադասութեան մէջ նշանակեալ անուն-
ները ընդհանուր գաղափար են ամփոփում իրանց մէջ—
յայտնի չէ: Թէ ի՞նչ խանութ է մտել խօսողը և ի՞նչ
մարդ է տեսել:

Երկրորդ նախադասութեան մէջ միւնցոյն բառերը,
սկզբից կամ վերջից աննշան մասնիկ առնելով՝ ընդհա-
նուր գաղափարը մասնաւորում են՝ իւնունը մտայ ասե-

լով, իսկոյն ըմբռնում ենք, որ մի յայտնի ու որոշ խանութի է ակնարկում. իսկ մարդ ասելով՝ մենք ըմբռնում ենք, որ նորա տեսածը մի՛ մարդ է եղել և ոչ թէ ընդհանրապէս մարդ արարածը:

§ 163. Այն տառը կամ մասնիկը, որ գրվում է անուան սկզբից կամ վերջից եւ նորա գաղափարը մասնաւորում է, կոչվում է յօդ:

Յօդը երկու է՝ որոշեալ՝ և եւ անորոշ՝ մի՛ և յօդը ձայնաւորով վերջացած բառի վերայ է գրվում՝ ձի՞ն, աղաւնի՞ն, որդի՞ն, ձու՞ն:

Եթէ անունը՝ վերջացած է յ տառով, յ սովորապէս վերանում է եւ նորան փոխարինում է ն յօդը՝ քահանան, երեխան, գաթան, Մարթան:

Եթէ անուան յետագայ բառը ձայնաւորով է սկսուած, ապա նախընթաց անունը վերջից և յօդ է առնում:—Այն աշակերտն է յառաջադիմութիւն ցոյց տալիս, որ իւր յոյսն ուրիշի վերայ չի դնում:

Մնացած դիպուածներում ը է գրվում՝ մարդը, քարը, ծառը, ծիծեռնակը:

§ 164. Մէ յօդը գրվում է անունների ակրաբում, երբ խօսքը մի մասնաւոր՝ բայց մեզ անյայտ ու անծանօթ առարկայի մասին է՝ մ մարդ, մ ծառ, մ սեղան:—Դուրսը մ մարդ կայ կանգնած եւ քեզ է սպասում:

Անունների հոլովումը որոշեալ յօդով.

§. 165. Բառերը՝ որոշեալ յօդով՝ հոլովուելիս, մի քանի փոփոխութեան են ենթարկվում:

ա. Բոլոր հոլովները՝ թէ եզակի եւ թէ յոդ-նակի, կարող են յօդ առնել կամ չառնել, բայց ուղղականը, հայցականը եւ տրականը անպատճառ յօդ պիտի ունենան, իսկ սեռականը՝ հազիւ:

բ. Մարդկանց յատուկ եւ հասարակ անունները որոշեալ յօդով՝ հոլովուելիս՝ հայցականը նման պիտի լինի ոչ թէ ուղղականին, այլ տրականին:

§ 166. Ահա որոշեալ յօդով գոյականի հոլովման պատկերը.

Ո-ղ-. հացը—թռչունը

Սեր-. հացի—թռչունի

Տրակ-. հացին—թռչունին

Հայ. հացը—թռչունը

Բաց. հացիցը (հացից)—թռչունիցը.

Գործ. հացովը (հացով)՝ թռչունովը.

Ներժ. հացումը (հացում)՝ թռչունումը.

§ 167. Ահաւասիկ եւ մարդու յատուկ եւ հասարակ անունը՝ որոշեալ յօդով՝ հոլոված.

Ո-ղ-. հայրը—Կարապետը.

Սեր-. հօր—Կարապետի.

Տրակ-. հօրը—Կարապետին.

Հայց. հօրը—կարապետին,

Բաց. հօրից (ը)—կարապետից (ը).

Գողթ. հօրով (ը)—կարապետով (ը).

Նէրժ. » —կարապետում (ը).

201. Իմացէք, թէ նշանակեալ բառերը ինչ հոլով են։
Մայրը սիրում է որդուն։ Որդին հօրը պատիւ է տապաւում։ Որդին հօրը պատուում է։ Հայրը Յահաննէնին ուսումնարան տարաւ, Ուսուցիչը Յահաննէնին գրքեր և դասական պիտոյքներ առուց, Ուսուցիչը քննեց աշխերդին։ Ուսուցիչն ասաց աշխերդին, որ նա դասատունը փոխում է։

Ես տեսայ մի աշխերդ։ Ես տեսայ այն աշխերդին։ Մէկ աշխերդ գիրք կորել էր։ Այն աշխերդ գիրքը կորել էր։

202. Որսորդն ազանեց մէկ նույն։ Որսորդն սպանեց նույն։ Անտառապահը մի ծառ կտրեց։ Անտառապահը ծառը կտրեց։ Թռչնորսը նույն է որսում։ Թռչնորսը որսում է նույն։ Կացնովը խփիր և կտրիր գոյաց։ Կանով կտրիր։ Կացնովը սուր է դաշոյնը։ Դաշոյնը հացնէց սուր է։

Ա.ծական անուան հոլովումը.

§ 168. Ա.ծական անունը երկու տեսակ գործածութիւն ունի ա. գոյականի հետ, բ. մենակ առանց գոյականի։

§ 169. Եթէ ածական անունը գոյականի հետ է, միշտ նախադաս է վարդում եւ անփոփոխ է մնում—չի հոլովում։

Օրինակ՝ Ո-դ. բարի մարդ—սպիտակ թուղթը.
Սէմ. բարի մարդու—սպիտակ թղթին.
Տր. բարի մարդու—սպիտակ թղթին.
Հայց. բարի մարդ—սպիտակ թուղթը.
Բաց. բարի մարդուց—սպիտակ թղթից.
Գողթ. բարի մարդով—սպիտակ թղթով.
Նէրժ. բարի մարդում—սպիտակ թղթում։

§ 170. Եթէ ածականը մենակ է, յօդ է առանում եւ գոյականի պէս է հոլովվում։

Օրինակ՝ Սպիտակը—սպիտակների.
Սպիտակի—սպիտակների.
Սպիտակն—սպիտակներին.
Սպիտակից(ը)—սպիտակներից(ը)
Սպիտակով(ը)—սպիտակներով(ը)
Սպիտակում(ը)—սպիտակներում(ը)։

Թուական անունների հոլովումը.

§ 171. Թուական անուններն էլ, ածականի պէս, երկու տեսակ գործածութիւն ունին՝ մենակ եւ գոյականի հետ։

Եթէ թուականը գոյականի հետ է, նախադաս է դրվում եւ չի հոլովվում։

Եթէ թուականը մենակ է, հոլովվում է որպէս գոյական անուն՝ յօդով եւ առանց յօդի։

§ 172. Բոլոր թուական անունները հոլովվում են առաջին հոլովման տակ։

Օրինակ՝

Ա. Հ. Հինգ—հինգերորդ—հնգական.

Ա. Տ. Հնգի—հինգերորդի—հնգականի.

Բայց. Հնգից—հինգերորդից—հնգականից.

Գոր. Հնգով—հինգերորդով—հնգականով.

Ներ. Հնգում—հինգերորդում—հնգականում:
Յոգնակիում թուական առունները հաղիւ են
գործածվում, այն էլ միայն թուական գործողու-
թիւնների մէջ;—Հնգերը եթէ միասին ժողովենք,
կ'ստունանք...

§ 173. Երկու բառը, հոլովուելիս, առնում է
+ կամ + տառը—երկուսի, երկուքի:

Եօթը, ա-նը՝ հոլովուելիս՝ ը գիրը թողնում են
—եօթի, ութի:

Դերանունների փոփոխութիւնը.

§ 174. Գոյական դերանունները, գոյական
առունների պէս, ունին թիւ եւ հոլով: Գոյական
դերանունները որոշեալ են, այնպէս որ՝ հոլովուե-
լիս՝ հայցականը միշտ նման է լինում տրականին
եւ ոչ ուղղականին:

§ 175. Անյառիան դերանունները հոլովում
են հետեւեալ կարգով՝

ա. Ես, իմ, ինձ, ինձանից (ինձնից), ինձա-
նով, ինձանում:

Մենք, մեր, մեզ, մեզանից (մեզնից) մեզանով,
մեզանում:

բ. Դու, քո, քեզ, քեզանից (քեզնից), քեզա-
նով, քեզանում:

Դուք, ձեր, ձեզ, ձեզանից (ձեզնից), ձեզա-
նով, ձեզանում:

գ. Ինքն, իր, իրանից, իրանով, իրանում:

Իրանք, իրանց, իրանցից, իրանցով, իրանցում:

203. Գուէ՛ք անձնական դերանունների հոլովը և կա-
տարած պաշտօնը:

—Ես սիրում եմ ի՞ս հօրը: Հայրս ինձ մի գեղեցիկ
պարզե տուեց: Հայրս գովեց ինձ և յորդորեց, որ միշտ
ջանասէր լինիմ: Մայրս ինձանից մի նամակ ստացաւ, նա
հէնց ինձանով է միսիթարպում միայն: Ինձնում ես մեծ
սէր եմ զդում դէպի բարին և առաքինին:

204. Նախադասութեամբ հոլովեցէ՛ք ո՞ո՞ և ի՞ո՞ դե-
րանունները հետեւեալ կարգով՝

Ես ունիմ եղբայր:

Ի՞ս հօրեղբայրս բարի մարդ է, և այլն:

§ 176. Ցաւական դերանունները երկու են՝
գոյական եւ ածական:

Գոյական ցուցականները հոլովվում են հետեւ-
եալ կարգով՝

ա. Սա, սորա, սորան, սորանից, սորանով,
սորանում: Կամ՝ սրա, սրան...

Սորանք, սորանց, սորանց, սորանցից, սորան-
ցում, կամ՝ սրանք...

բ. Սոքա, սոցա, սոցա, սոցանից, սոցանով,
սոցանում:

205. Հոլովեցէ՛ք նոյն ձեռվ ո՞ո՞ և նա դերանունները:

206. Գրեցէ՛ք նախադասութիւններ, ուր ո՞ո՞ և նա

դերանունները կատարած լինին ենթակայի, բուն և երկրորդական լրացնողների և որոշողի պաշտօն զանազան հոլովներով թէ եղակի և թէ յոգնակի:

§ 177. Հարցական գերանունները երկու են՝ գոյական՝ «՞» և «՞» եւ ածական՝ «՞»:

Ո՞չ հարցականը եղակի թուով է հոլովկում; իսկ յոգնակի միայն ուղղական հոլովն ունի:

Ո՞վ, ո՞ւմ, ո՞ւմ(ը), ո՞ւմնից, ո՞ւմնով, ո՞ւմնում; — Ո՞վքեր:

Ի՞նչ հարցականը հոլովկում է առաջին հոլովման տակ եւ, որպէս անշունչ առարկայի տեղ բանող, հայցականը նման է ունենում ուղղականին:

Ի՞նչ, ի՞նչի՞ն, ի՞նչի՞ց, ի՞նչո՞վ, ի՞նչո՞ւմ; ի՞նչե՞ր, ի՞նչե՞րի, ի՞նչե՞րին, ի՞նչե՞րից, ի՞նչե՞րով:

§ 178. Ո՞վ հարցականը գործ է ածվում գոյական անուան հետ եւ ի՞նքը անփոփոխ է մնում: բայց նա կարող է յօդ առնել եւ հոլովկուիլ:

Ո՞րը, ո՞րի, ո՞րին, ո՞րից, ո՞րով, ո՞րում; Ո՞րոնք, ո՞րոնց, ո՞րոնց, ո՞րոնցից, ո՞րոնցով, ո՞րոնցում:

§ 179. Միեւնոյն ձեւով հոլովկում է եւ «ը յարաբերական գերանունը»:

207. Գրեցէ՛ք այնպիսի բաղադրեալ նախադասութիւններ, որոնց մէջ երկրորդական նախադասութիւնը կապուած լինի զլիսաւորի հետ «ը յարաբերական գերանուան զանազան հոլովներով»:

Ստացական գերանուններ. *

§ 180. Գոյական գերանունների սեռական հոլովը կոչվում է «արագական գերանուն»:

Ստացական գերանունը միշտ ածական է եւ որոշեալ յօդով գոյական է առնում իւր մօտ:

Բայց նա կարող է յօդ առնել եւ հոլովուիլ իբրեւ գոյական. ձայնաւորով վերջացածները կրկին յօդ են առնում: —իմ—իմը. քո—քոնց. նորանորանը...**

Դերանուանական յօդեր.

§ 181. Դերանունների արմատական տառերը՝ «, ՞, ՞», գրվում են գոյական անունների վերայ եւ որոշում են նոցա գէմքը, ուստի եւ կոչվում են գլուխալ կամ գերանուական յօդեր:

«, ՞, ՞» տառերը, հոլովական բառերի վերայ գրուելով, միեւնոյն նշանակութիւնն են տալիս նո-

*) Ստացական գերանունները աշխարհաբար լեզուի մէջ իսկապէս առանձին դասակարգ չեն կազմում. սոքամիւս գերանունների սեռականն են, որ գոյական անունների սեռականի պէս կրկնակի յօդ են առում և հոլովում. օրինակ՝ Կարապետի գիրքը. —Կարապետինը, Կարապետինից, Կարապետինից...

**) Վերջինը բոլոր հոլովները չունի:

— 63 —

ցա, ինչ նշանակութիւն պիտի տային անձնական
եւ ցուցական գերանունները.

Հայրս=ես հայրս, իմ հայրս, սա հայրս, սոյն
հայրս:

Մայրդ=

Քոյրը(ն)=

Տունս=

Գլրքդ=

Եկեղեցին=

Անորոշ գերանուններ.

§ 182. Անորոշ գերանունները լինում են՝

ա. Գայական՝ ոմն, ոք, ոքմին, ոչ ոք, ոչինչ,
իրար, միմեանց, մէկզմէլ, ամէնքը, ամենեքեան:

բ. Աժական՝ քանի, միքանի, որքան, այս ինչ,
այն ինչ, այսքան, նոյնքան:

գ. Աժական եւ գոյական՝ միւս—միւսը, մէկէլ
—մէկէլը, ուրիշ—ուրիշը, իւրաքանչիւր—իւրաքան-
չիւրը, ամէն—ը, ամէն մէկ—ը, միեւնոյն—ը, բու-
լոր—ը:

դ. Աժական եւ անհալվէլ՝ որեւիցէ, որ-
պիսիւիցէ, որքանեւիցէ, ինչեւիցէ, ինչ ինչ, որ-
պիսի, այնպիսի...

§ 183. Գայական գերանուններից աճա, ա+, ա-
մէնէ+էան, բալըշէ+էան չեն հոլովում. «Ի՞ն յոզնակի
ունի» (§ 184):

Իրար, մէկզմէլ, միմեանց հայցական հոլով են,
ուղղական ցունին. սեռականը կազմվում է հայցա-
կանից առաջին երկուսին ա= կցելով՝ խև երրորդը
անսիովիուս:

Հայց. Մէկզմէկ, իրար, միմեանց պատժեցին:
Սէր. Մէկզմէկու, իրարու, միմեանց տուն
քանդեցին:

Տիան. Մէկզմէկու, իրարու, միմեանց ընծաներ
տուին:

Բայց. Մէկզմէկուց, իրարից, միմեանցից բա-
ժանուեցան:

Գայց. Մէկզմէկով, իրարով, միմեանցով գցե-
ցին յանցանքը:

§ 184. Ունին, «ման+ հոլովում են չետեւեալ
կերպով.

Ո-ղ. Հ. ոքմին Ո-ղ. ոմանք

Սէր. եւ Տ. ոքմնի Ս. Տ. Հ. ոմանց

Բայց. ոքմնից Բայց. *

Գայց. ոքմնով Գայց. * { ոմանցից
Նէրդ. ոքմնում Նէրդ. { ոմանցով

Նէրդ. ոքմնում Նէրդ. { ոմանցում

§ 185. Մնացած բոլոր անորոշ գերանուննե-
րը կարող են յօդ առնել եւ գոյական անուան պէս
հոլովուիլ առաջին կանոնաւոր հոլովման տակ:

Հոլովեցէ՝ դ. Ամէնքը, ամէնքի.

ա. Ոչ ոք, ոչ ոքի. ե. Քանիսը, քանիսի.

բ. Ոչնչ, ոչնչի. գ. Մի քանիսը, մի քանիսի.

դ. Ամէնը, ամէնի. է. Այս ինչ, այս ինչի.

*) Անգործածական

- Ա. Այսքան, այսքանի.
 Բ. Այսչափ, այսչափի.
 Ժ. Նոյնքան, նոյնքանի.
 Ժա. Բոլորը, բոլորի.
 Ժբ. Միւս, միւսի.
 Ժդ. Մէկէլ, մէկէլի.
- Ժդ. Ուրիշ, ուրիշի.
 Ժե. Իւրաքանչիւր, իւրաքանչիւրի.
 Ժդ. Ամէն մէկը, ամէն մէկի . . .

Բայի փոփոխութիւնը.

§ 186. Բայի փոփոխութիւնը եղանակներով, ժամանակներով, թուերով եւ դէմքերով՝ կոչվում է խօնացնում:

ա. Սիրել սիրում եմ կըսիրէմ, սիրէմէ, սիրէմ։
 բ. Կարդալ կարդում եմ կըկարդամ, կարդացի, կարդաց։

գ. Խօսիլ խօսում եմ կըխօսիմ, խօսեցայ, խօս։
 դ. Ուրախանալ, ուրախանում եմ կ'ուրախանամ, ուրախացայ, ուրախաց։

§ 187. Բոլոր բայերը միատեսակ չեն խոնարհվում, այլ շատ կամ սակաւ տարբերվում են իրարից։

Բոլոր միատեսակ խոնարհուող բայերը առանձին կարգ են կազմում եւ կոչվում են լժարիւմնեն *:

§ 188. Բայերն ունին չորս լծորդութիւններ՝ լծորդը լծորդութիւնը կազմում են այն բայ-

*) Լժարիւմնեն նշանակում է կապակցութիւն, լծել և լծորդել բառերից։

երը, որոնք եւ վերջաւորութիւն ունին:—Սիրել, գրել, գործել...

Երիւրի լծորդութիւնը կազմում են այն բայերը, որոնք եւ վերջաւորութիւն ունին:—Խօսիլ, ասիլ, յոգնիլ...

Աւ վերջացած բայերը կազմում են Երիւրի լծորդութիւնը:—Կարդալ, խնդալ, հաւատալ...

Անաւ վերջացած բայերը կազմում են Արիւրի լծորդութիւնը—Ուրախանալ, զարմանալ, բարձրանալ...

Եական բայերի խոնարհումը.

—եմ, լինիմ—

§ 189. Զէզօք բայերից երկուսը ցոյց են տալիս ոչ թէ առարկայի գործողութիւնը, այլ խակապէս նորա գոյութիւնը, էութիւնը. սոքա կոչվում են էտիան բայեր: Եական բայերը միեւնոյն ժամանակ օժանդակութեամբ է կազմում բայերի ժամանակների մեծագոյն մասը: Իրանք էական բայերն ունին առանձին խոնարհումնեն:

ա. Եօ բայը միայն երկու ժամանակ ունի՝ սահմանականի ներկան եւ անհատաբը:

‘Ներկան’ եմ, ես, է. ենք, էք, են:

Անհատաբ՝ էի, էիր, էր. էինք, էիք, էին:

բ. Լինիմ բայը բոլոր ժամանակներն ունի.

Սահմանական Եղանակ՝
 Ներկայ՝ լինում եմ, լինում ես, լինում է.
 լինում ենք, լինում եք, լինում են.
 Անհատար՝ լինում էի, լինում էիր, լինում էր.
 լինում էինք, լինում էիք, լինում էին:
 Կատարեալ՝ եղայ, եղար, եղաւ.
 եղանք, եղաք, եղան: *

Վաղակառ. եղել եմ, եղել ես, եղել է.
 եղել ենք, եղել եք, եղել են:
 Ապաւնի՝ կըլինիմ, կըլինիս, կըլինի.
 կըլինինք, կըլինիք, կըլինին:
 Պայման. առ. կըլինէի, կըլինէիր, կըլինէր.
 կըլինէինք, կըլինէիք, կըլինէին:
 Հրամայական Եղանակ. եղիր, եղէք:
 Սահմանական Եղանակ՝ որ, թէ, եթէ
 Ապաւնի՝ լինիմ, լինիս, լինի.
 լինինք, լինիք, լինին:
 Անհատար՝ լինէի, լինէիր, լինէր.
 լինէինք, լինէիք, լինէին:
 Դերբայ՝ անոցալ՝ լինիլ. ներկայ՝ եղող. անցեալ՝
 եղել—եղած. ապաւնի՝ լինելու:

*) Կատարեալը և նորան նման ժամանակները խակապէս հին—հայերէնի էղանէց բայից են առնուած:

Առաջին լծորդութիւն.

§ 190. Զորս լծորդութեան բայերը տարբերվում են իրարից անորոշ բերբարականութեայի, անցեալ կատարեալէայի, հրամայականի եւ անցեալ բերբարականութեամբ:

Մնացած ժամանակները բոլոր լծորդութիւնների մէջ շինվում են միապէս եւ նման են միմեանց:

§ 191. Առաջին լծորդութեան անցեալ կատարեալը կազմվում է անորոշ դերբայի վերջաւորութեան փոխարէն դնելով էցի մասնիկը, հրամայականը—է՛ր, է՛, անցեալ դերբայը—էլ—ած:

Ահաւասիկ առաջին լծորդութեան ամբողջ պատկերը.

Սահմանական Եղանակ՝

Ներկայ՝ գրում եմ, գրում ես գրում է.

գրում ենք, գրում եք, գրում են:

Անհատ. գրում էի, գրում էիր, գրում էր.

գրում էինք, գրում էիք, գրում էին:

Կատար. գրեցի, գրեցիր, գրեց.

գրեցին, գրեցի, գրեցին:

Վաղակ. գրել եմ, գրել ես, գրել է.

գրել ենք, գրել եք, գրել են:

Գերակ. գրել էի, գրել էիր, գրել էր.

գրել էինք, գրել էիք, գրել էին:

Ապաւ. կըգրեմ, կըգրես, կըգրե.

կըգրենք, կըգրէք, կըգրեն.
Պայ. տղ. կըգրէի, կըգրէիր, կըգրէր.
կըգրէինք, կըգրէիք, կըգրէին:
Հըսմայական՝ գրիր (Է). գրեցէք:
Սուպարտասական՝ որ, թէ, եթէ
Ապառանի՝ գրեմ, գրես, գրէ.
գրենք, գրեք, գրեն:
Անհամ. գրեի, գրեիր, գրէր.
գրէինք, գրէիք, գրէին:

Դէբայ՝ գրել, գրող, գրել—գրած, գրելու:
208. Ուշադրութեամբ քննեցէք խոնարհած բայը և
բացադրեցէք ժամանակների կազմութիւնը:
209. Սոյն օրինակով խոնարհեցէք հետեւեալ չէզոք
բայերը՝ փաղել, քայլել, սպասել, պարապել.
210. Գրեցէք հետեւեալ ներգործական բայերի անցեալ
կատարեալը, ապառնին, անցեալ դերբայը, հրամայականը.
հանել, կանչել, գովիլ, ուզել, լունել, ժողովել, ազատել,
փրկել, սպանել, դատարկել, արձակել, կապել, բեկուել,
համարել—թուել:

Երկրորդ լծորդութիւն.

§ 192. Երկրորդ լծորդութեան տակն են իւ
վերջացած բոլոր ներգործական եւ չէզոք բայերը:
Երկրորդ լծորդութեան անցեալ կատարեալը
վերջաւորվում է Եղայ. մնացած ժամանակների
կազմութիւնը առաջին լծորդութեան պէս է:

Սահմանական էղանակ՝
Ներկայ՝ նստում եմ, նստում ես, նստում է.

նստում ենք, նստում էք, նստում են:
Անկատար՝ նստում էի, նստում էիր, նստում էր:
նստում էինք, նստում էիք, նստում էին:
Կատարեալ՝ նստէցայ նստէցայ, նստէցայ:
նստէցան, նստէցան, նստէցան:
Վաղակար. նստել եմ, նստել ես, նստել է.
նստել ենք, նստել էք, նստել են:
Գերակար. նստել էի, նստել էիր, նստել էր.
նստել էինք, նստել էիք, նստել էին:
Ապառանի՝ կընստիմ, կընստիս, կընստի,
կընստինք, կընստիք, կընստին:
Պայ. տղ. կընստէի, կընստէիր, կընստէր.
կընստէինք, կընստէիք, կընստէին:
Հըսմայական՝ նստիր (Է). նստեցէք:
Սուպարտասական՝ որ, թէ, եթէ
Ապառանի՝ նստիմ, նստիս, նստի.
նստինք, նստիք, նստին (նստեմ. նստենք):
Անկատար՝ նստէի, նստէիր, նստէր.

նստէինք, նստէիք, նստէին:
Դէբայ՝ նստի, նստող, նստել—նստած, նստելու:
§ 193. Երկրորդ լծորդութեան բայերը խո-
նարհվում են նաեւ առաջին լծորդութեան բայերի
պէս:

211. Հետեւեալ ներգործական բայերը խոնարհեցէք
երկրորդ լծորդութեան տակ՝ հանունիւ, սովորել:
212. Համեմատեցէք երկրորդ լծորդութիւնը առաջին
լծորդութեան եւ և բացադրեցէք նոցա նմանութիւնն ու
տարբերութիւնը:

213. Խոնարհեցէք, հետեւեալ բայերը կատարեալ, վաղակատար, գերակատար և ստորադասականի բոլոր ժամանակներով:—Խօսիլ, ապրիլ, աշխատիլ, կանգնիլ, բնակիլ, պառկիլ, յոդնիլ, սովորիլ, ծարվիլ, քրտնիլ, յաջողիլ. . .

214. Խոնարհեցէք էլ վերջացած հետեւեալ չեզոք բայերը առաջին լծորդութեան պէս՝ կարմրիլ, սպիտակիլ, պատահիլ, ցաւիլ, դադարիլ, հաւանիլ, պարապիլ...

215. Գտէք ձեր ընթերցանութիւնն դասի մէջ առաջին և երկրորդ լծորդութեան բայերը և խմացէք նոցա սեռ, եղանակը, ժամանակը, թիւը և դէմքը:

Երրորդ լծորդութիւն.

§ 194. Երրորդ լծորդութիւնը կազմում են վերջացած բայերը: Այս լծորդութեան անցեալ կատարեալը լինում է այսի, հրամայականը—անցեալ գերբայը—այէլ—այսած: Մնացած ժամանակների կազմութիւնը նախընթացների պէս:

Սահմանական Եղանակ:

Նէրէայ. կարդում եմ, կարդում ես, կարդում է. կարդում ենք, կարդում էք, կարդում են:

Անկառար՝ կարդում էի, կարդում էիր, կարդում էր. կարդում էինք, կարդում էիք, կարդում էին:

Կառաջեալ՝ կարդացի, կարդացիր, կարդացին:

Կարդացին+, կարդացի+, կարդացին:

Վաղակառ. կարդացի եմ, կարդացի ես, կարդացի է.

Կարդացի ենք, կարդացի էք, կարդացի են:

Գերակառ. կարդացել էի, կարդացել էիր, կարդա-

ցել էր.

կարդացել էինք, կարդացել էիք, կարդացել էին:

Աղաւանէ՝ կըկարդամ, կըկարդաս, կըկարդայ, կըկարդանչ, կըկարդանտ, կըկարդան:

Պայմ. ապ. կըկարդայի, կըկարդայիր, կըկարդար. կըկարդայինք, կըկարդայիք, կըկարդային:

Հրամայական՝ կարդա. կարդացէք:

Սահմանական՝ որ, թէ, եթէ կարդամ, կարդաս, կարդայ.

կարդանք, կարդաք, կարդան:

Անկառար՝ կարդայի, կարդայիր, կարդար. կարդայինք, կարդայիք, կարդային:

Գերբայ՝ կարդալ, կարդացող, կարդացել—ցած, կարդալու:

216. Համեմատեցէք երրորդ լծորդութեան գերբայը, կատարեալը, վաղակատարն ու գերակատարը նախընթաց լծորդութեանց հետ,—հրամայականը, ապառնին ու ստորադասականը երկրորդ լծորդութեան հետ:

217. Խոնարհեցէք ներգործական բայերս՝ աղալ, ըգգալ, հաւատալ, ողբալ, մուրալ. . .

218. Գրեցէք անցեալ գերբայը, վաղակատարը և գերակատարը հետեւեալ չեզոք բայերի՝ մնալ, գնալ, գոռալ, յուսալ:

219. Գրեցէք սահմանական ապառնի և ստորադասական ապառնի ժամանակներով հետեւեալ չեզոք բայերը՝ խոճալ, հազալ, անսալ:

220. Գրեցէք բոլոր եղանակներով և ժամանակներով հետեւեալ բայերը՝ ջանալ, խնդալ, խաղալ. . .

Զորբորդ լծորդութիւն։

§ 195. Զորբորդ լծորդութիւնը կազմում են
անալ վերջացած բայերը։

Զորբորդ լծորդութեան անցեալ կատարեալը
վերջաւորիում է այսու, հրամայականը այլի, ան-
ցեալ գերբայը այն—այս ժ։

Սահմանական եղանակ՝

Ներկայ՝ իմանում եմ, իմանում ես, իմանում է.
իմանում ենք, իմանում եք, իմանում են։
Անհատապ՝ իմանում էի, իմանում էիր, իմանում էր.
իմանում էինք, իմանում էիք, իմա-
նում էին։

Կառարշեալ՝ իմացայ, իմացար, իմացաւ.

իմացանք, իմացաք, իմացան։

Վաղակառ. իմացել եմ, իմացել ես, իմացել է.

իմացել ենք, իմացել եք, իմացել են։

Գերբակառ. իմացել էի, իմացել էիր, իմացել էր.

իմացել էինք, իմացել էիք, իմացել էին։

Ապառնէ՝ կ'իմանամ, կ'իմանաս, կ'իմանայ.

կ'իմանանք, կ'իմանաք, կ'իմանան։

Պայմ. տպ. կ'իմանայի, կ'իմանայիր, կ'իմանար.

կ'իմանայինք, կ'իմանայիք, կ'իմանային։

Հյամայական եղանակ՝ իմացի՞ն. իմացի՞ն։

Սպարաբառական եղանակ՝ որ, թէ, եթէ

Ապառնէ՝ իմանամ, իմանաս, իմանայ.

իմանանք, իմանաք, իմանան։
Անհատապ՝ իմանայի, իմանայիր, իմանար.
իմանայինք, իմանայիք, իմանային։
Դեբայ՝ իմանալ, իմացող, իմացել—ցած,
իմանալու։

221. Համեմատեցէք չորրորդ լծորդութեան կատա-
րեալը, հրամայականը և անցեալ գերբայը երկրորդ լծոր-
դութեան նոյն ժամանակների հետ։

222. Բոլոր չորս լծորդութիւնը համեմատեցէք մի-
մեանց հետ և բացատրեցէք, թէ որ ժամանակներովն են
տարրերվում իրարից։

223. Բացատրեցէք սահմանականի պարզ ապառնիի
և պայմ. ապառնիի կազմութիւնը և նոցա տարրերութիւնը,
ստորապասական ապառնիից և անկատարից բոլոր լծոր-
դութիւնների մէջ։

224. Խոնարհեցէք վահանակ և վահանակ բայերը համեմա-
տական կերպով, զուգընթացաբար։

225. Սահմանական եղանակի բոլոր ժամանակներով
խոնարհեցէք հետևեալ ներգործական բայերը՝ մոռանալ,
խոստանալ, գիտենալ, գողանալ, ընթեռնուլ—ընթերցայ(*),

226. Խոնարհեցէք մնացած եղանակներով հետևեալ
չէզրք բայերը՝ ուրախանալ, զարմանալ, բարձրանալ, մե-
ծանալ, փոքրանալ, հարստանալ. . .

Կրաւորական բայերի խոնարհումը.

§ 196. Կրաւորական բայերը ծագում են ներ-

*) Միակ բայն է, որ պահել է գրաբարի ու վերջա-
ւորութիւնը, եթէ չիշենք մի քանի բայեր ևս, որոնք գոր-
ծածական չեն՝ զգենուլ, թողուլ (զգենալ, թողել կամ թող-
նել)։

գործական բայերից՝ անցեալ դերբայի առաջին վերջաւորութիւնը անխտիր ունի դարձնելով, օրինակ.

Լծորդ.	Ներգ.	Դերբայ	Կրաւոր.
ա.	սիրել,	սիրել—	սիր-ուիլ.
բ.	հաւանիլ,	հաւանել	հաւան-ուիլ.
գ.	կարդալ,	կարդացել	կարդաց-ուիլ.
դ.	մոռանալ,	մոռացել	մոռաց-ուիլ.

§ 197. Ամենայն բայ, որի վերջաւորութիւնը կարելի չլինի սոյն ձեւով փոփոխել, չէզոք է. փոփոխուողները ներգործական են:

§ 198. Անորոշ դերբայը այսպէս կազմելուց յետոյ՝ բոլոր կրաւորական բայերը խոնարհելու է երկրորդ լծորդութեան տակ:

Սահմանական եղանակ՝
Ներշնչ՝ սիրվում եմ, հաւանվում եմ,
կարդացվում եմ, մոռացվում եմ:

Անհագար՝ սիրվում էի, հաւանվում էի,
կարդացվում էի, մոռացվում էի:

Կարդացվում սիրուեցայ, հաւանուեցայ,
կարդացուեցայ, մոռացուեցայ: *

Վաղական. սիրուել եմ, հաւանուել եմ,
կարդացուել եմ, մոռացուել եմ:

Գերազան. սիրուել էի, հաւանուել էի,
կարդացուել էի, մոռացուել էի:

*) Կամ առաջին լծորդութեան վերջաւորութեամբ՝ սիրուեցի . . .

Ապաւանէ՝ կըսիրուիմ, կըհաւանուիմ,
կըկարդացուիմ, կըմոռացուիմ:
Պայ. ապ. կըսիրուէի, կըհաւանուէի,
կըկարդացուէի, կըմոռացուէի:
Հըմմայանէ. սիրուիր (է), հաւանուիր,
կարդացուիր, մոռացուիր:
Սպարադասական՝ որ, թէ, եթէ
Ապաւանի՝ սիրուիմ, հաւանուիմ,
կարդացուիմ, մոռացուիմ:
Անհագար՝ սիրուէի, հաւանուէի,
կարդացուէի, մոռացուէի:
Գերբայ՝ սիրուիլ, հաւանուիլ,
կարդացուիլ, մոռացուիլ:
227. Խոնարհեցէք նշանակեալ բայերը բոլոր ժամանակներով: — Գրաւոր:

228. Իմացէք, թէ հետևեալ բայերից որոնք են ներդործական և որոնք չէզոք: — Կարդալ, հաւատալ, գողանալ, խմանալ, մարդարէանալ, մոռանալ, յղանալ, ծնել, չափել, հոգալ, որսալ, զարմանալ, հարթիլ, բարկանալ, զօրանալ թշնամանալ, ծովանալ, գողալ, հոգալ, յուսալ, ջանալ, ցնծալ, ազգել, աղաչել, այրել, բռնել, կարել, հրամայել, մատնել, յայտնել, շարժել, շնել, չնչել, փրկել, քաջաւերել, բաժանել, դարմանել, խափանել, կործանել, յանդիմանել, սերմանել, հալածել, փռնտել, հասնիլ, աղաղել, ամաչել, գոչել, դիմել, սպաւել, թագաւորել, տիրել կանչել, կանաչիլ, մնչալ, մունչալ կտրել, կոտրել, վարել, քանդել, փորել, աղալ, աղել, ճղել, քարել, տաշչել, ջարդել, հալածել, մղել, փրկել, սպանել, անցնիլ, իջնիլ, ելնել, հասնիլ, մտնել, համբերել, յուսահատիլ, վհատիլ, դաւանել, խոստովանել, խորհել, կամնալ, նայ-

Եւ, ջանալ, բանալ, աշխատիլ, բնակիլ, դադարիլ, հրաժարիլ, պակասիլ արգելել, արձակիլ, դիզել, կարկառել, գործել, գտնուիլ:

229. Վերոյիշեալ բայերից ներգործականները գրեցէք կրաւրականի վերջաւորութեամբ:

Անկանոն խոնարհմունք.

§ 199. Այն բայերը, որոնց սահմանականի կատարեալը, հրամայականը եւ անցեալ գերբայը մեր սովորած խոնարհումից շեղվում են, կոչվում են անկանոն բայեր: Անկանոն բայերը երկու կարգի են բաժանվում՝ կէս զարտուղիք եւ բուն զարտուղիք:

§ 200. Կէս զարտուղիքը են բոլոր նէւ նիւ նաև վերջաւորութեամբ բայերը, որոնք խոնարհվում են չորրորդ լծորդութեան պէս, բայց անկանոն ժամանակներումը և տառը փոխանակ ցի փոխելու՝ իբրեւ եկամուտ տառ, դուրս են ձգում: — Կրաւրականը կանոնաւոր է եւ և տառը պահում է:

Օրինակներ՝

Գտնել, գտայ, գտիր, գտել—գտած:

Տեսնել, տեսայ, տեն, տեսել—տեսած:

Մտնել, մտայ, մտիր, մտել—մտած:

Լինիլ, եղայ, եղիր, եղել—եղած:

Դառնալ, դարձայ, դարձիր, դարձել—դարձած:

Դառնալ, դառայ, դառ, դառել—դառած:

Հեծնել, հեծայ, հեծիր, հեծել—հեծած:

Իջնիլ, իջայ, իջիր, իջել—իջած:

Խածնել, խածայ, խածիր, խածել—խածած:

Հասնիլ, հասայ, հասիր, հասել—հասած (հասունանալ):

Հասնիլ, հասայ, հասիր, հասել—հասած (հասանիլ):

Բուսնիլ, բուսայ, բուսիր, բուսել—բուսած:

Անցնիլ, անցայ, անցիր, անցել—անցած:

Հագնիլ, հագայ, հագիր, հագել—հագած:

Մեռնիլ, մեռայ, մեռիր, մեռել—մեռած:

Ծննանիլ, ծնայ, ծնիր, ծնել—ծնած:

Զրունիլ (ուլ) զրօսայ, զրօսիր, զրօսել—զրօսած (անդրդածական):

Երդուկիլ (նուլ), երդուայ, երդուիր, երդուել—երդուած:

Ընկնիլ, ընկայ, ընկիր, ընկել—ընկած:

230. Խոնարհեցէք ձնէւ, ձնուէւ և համեմատեցէք ձնուէւ բայի հետ, որ միմոցն ժամանակ ներգործական է, կրաւրական և չէզոք:

231. Խոնարհեցէք դունէւ, դւնունէւ, և հաժնէւ բայերի կրաւրականը:

232. Գրաւոր ներկայացրէք վերոյիշեալ բայերի սահմանականի կատարեալ, վաղակատար, գերակատար ժամանակները բարոր դէմքերով:

233. Գրեցէք նոյն բայերի ապառնին և ստորադասականը բարոր դէմքերով:

§ 201. Այսպէս խոնարհվում են և վերջացած բայերը, որոնց և տառը եւս, եկամուտ լինելով, դուրս է ձգվում:

Թռչիլ, թռայ, թռիր, թռել—թռած:

Փլչիլ, փլայ, փլիր, փլել—փլած:

Դիպչիլ, դիպայ, դիպիր, դիպել—դիպած:

Կպչիլ, կպայ, կպիր, կպել—կպած:

Կորչիլ, կորայ, կորիր, կորել—կորած:

234. Զուզընթացաբար խոնարհեցէք հունեւ և հունեւ բայերը և բացատրեցէք, թէ ինչու առաջին բայը պահում է և տառը, իսկ երկրորդը՝ ոչ:

235. Խոնարհեցէք զբաւոր՝ ուսւէւ, էսւէւ, հանչէւ բայերը, որոնց և տառը եկամուռտ չէ, այլ արմատական:

§ 202. Հետեւեալ բուն զարտուղի բայերը խոնարհման երկու ձեւ ունին, որոնցից առաջինը, անկանոնը, աւելի գործածական է։ Սոցա կրաւորականներն եւս կամոնաւոր են։

ա. Բերել կրաւորական բերուիլ՝

Կատարէտալ. Բերի, բերիր, բերաւ. բերինք, բերիք, բերին։

Կատարէտալ Բերեցի, բերեցիր, բերեց. բերեցինք, բերեցիք, բերեցին։

Բեր, բերէք, բերեցէք. բերած։

բ. Անել—անուիլ՝

Ասի, ասիր, ասաւ. ասինք, ասիք, ասին։

Ասայի, ասացիր, ասաց. ասացինք, ասացիք, ասացին։

Ասա, ասիր, ասէք, ասացէք. ասած—ասել։

գ. Անել—անուիլ կամ արուիլ։

Արի, արիր, արաւ. արինք, արիք, արին։

Արեցի, արեցիր, արեց. արեցինք, արեցիք, արեցին։

Արա, արէք, արեցէք. արել—արած։

դ. Դնել—դնուիլ կամ դրուիլ։

Դրի, դրիր, դրաւ. դրինք, դրիք, դրին։

Դրեցի, դրեցիր, դրեց. դրեցինք, դրեցիք, դրեցին։

Դիր, դրէք, դրեցէք. դրել—դրած։

ե. Աւանել—աւանուիլ (գնել):

Աւայ, առար, առաւ. առանք առաք, առան։ Ա՛ռ, առէք. առել—առած։

զ. Տանել—տանուիլ կամ տարուիլ։

Տարայ, տարար, տարաւ. տարանք, տարաք, տարան։

Տարի, տարիր, տարաւ. տարինք, տարիք, տարին։

Տար, տարէք. տարել—տարած։

է. Բանալ * — բանուիլ։

Բացի, բացիր, բացաւ. բացինք, բացիք, բացին։ Բացեցի, բացեցիր, բացեց. բացեցինք, բացեցիք, բացեցին։

Բաց, բացիր, բացէք, բացեցէք. բացել—բացած։

ը. Նստիլ։

Նստայ, նստար, նստաւ. նստանք, նստաք, նստան։

Նստեցի, նստեցիր, նստեց. նստեցինք, նստեցիք, նստեցին։

Նիստ, նստիր, նստէք. նստել—նստած։

*) Ներկան անդործածական է. զենք ասում բանում եմ, բանում ես, բանում է, այլ բաց եմ անում... որովհետեւ բանում է և բանել ներկործականի ներկան է.

թ. Թաղնել—Եաղնուիլ կամ Եաղել—Եաղուիլ:
Թողի, թողիր, թողաւ, թողինք, թողիք, թողին,
թողեցի, թողեցիր, թողեց. թողեցինք, թողեցիք, թողեցին:

Թող, թողէք, թողեցէք. թողել—թողած:

Ժ. Երդնուուիլ կամ Երդուուիլ (գործ է ածվում Երդում ուտել):

Երդուայ, երդուար, երդուաւ. երդուանք, երդուաք, երդուան:

Երդուեցայ, երդուեցար, երդուեցաւ. երդուեցնք, երդուեցաք, երդուեցան:

Երդուիր, երդուեցէք. երդուել—երդուած:

Ժա. Սկսել—սկսուիլ:

Սկսայ, սկսար, սկսաւ. սկսանք, սկսաք, սկսան: Սսկսեցի, սկսեցիր, սկսեց. սկսեցինք, սկսեցիք, սկսեցին:

Սկսիր, սկսէք, սկսեցէք. սկսած—ել:

Ժբ. Պըժնէլ—պըժնուուիլ (Ն եկամուտ):

Պըժայ, պըժար, պըժաւ, պըժանք, պըժաք, պըժան:

Պըժիր, պըժէք. պըժել—ած:

236. Վերոյիշեալ բայերից իւրաքանչիւրը խոնարհեցէք բոլոր ժամանակներով (գրաւոր):

237. Ներդորժականների կրաւորականները խոնարհեցէք բերանացի:

238. Անցեալ կատարեալի բոլոր դէմքերով նախադասութիւններ գրեցէք առաջին վեց բայերի վերայ:

239. Նոյն ձեռով մնացած բայերի վերայ:

§ 203. Երկու բայ կայ, որոնց անցեալ կատարեալ ուրիշ արմատից է շինվում. ուրեմն նոքագլխովին անկանոն են: Կրաւորականը կանոնաւոր է:

Ա. Ուուիլ—ուուուիլ կամ էւրուիլ:

Կերայ, կերար, կերաւ. կերանք, կերաք, կերան: Կեր, կերէք. ուտող—կերող. կերել—կերած:

Բ. Գալ:

Եկայ, եկար, եկաւ. եկանք, եկաք, եկան: Եկ, եկէք. եկող. եկել—եկած:

§ 204. Գալ, լալ եւ առաջ բայերի սահմանականի ներկան եւ անկատարը եւս անկանոն են, այն է՝ փոխանակ սովորական ու—մ վերջաւորութեան, անորոշ գերբայի վերայ առնում են իւ վերջաւորութիւնը:—Գալիս եմ, գալիս ես, գալիս է.

Տալ * —տալիս եմ, տալիս ես, տալիս է. տալիս ենք, տալիս էք, տալիս են:

Տալ—տուի, տուիր, տուաւ. տուինք, տուիք, տուին:

Տալ—տուեցի, տուեցիր, տուեց. տուեցինք, տուեցիք, տուեցին:

Տուր, տուէք, տուեցէք. տուող, տուել—տուած:

Լալ * —լալիս եմ, լալիս ես, լալիս է. լալիս ենք, լալիս էք, լալիս են:

*) Կրաւորականը լինում է տրուիլ կամ ուամկօրէն տվուալ և սակաւ է գործ ածվում:

*) Գործ է ածվում լայ լինիլ:

Լալ—լացի, լացիր, լացաւ (եց). լացինք, լացիք, լացին:

Լաց, լացէք. լացող. լացել—ած:

240. Գրաւոր ներկայացրէք ժու և լու բայերը բոլոր եղանակներով և ժամանակներով խոնարհած:

241. Տու բայի ստորագրասական անկատար և ապառնի ժամանակների վերայ նախադասութիւններ զրեցէք՝ եղակի և յոդնակի:

Գու բայի ներկայ, անցեալ և ապառնի դերբայերից նախադասութիւններ զրեցէք, այնպէս որ դերբայերը որոշողի պաշտօն կատարած լինին:

Պակասաւոր բայեր.

§ 205. Կան բայեր, որոնք բոլոր ժամանակները չունին: Դոքա կոչվում են պակասաւոր: Պակասաւոր բայերի պակաս ժամանակները լրանում են ուրիշ բայերով: Ահաւասիկ:

ա. Ե՞մ էական բայը ունի միայն երկու ժամանակ՝ սահմանականի ներկան եւ անկատարը. Է՞մ, է՞մ:

բ. Կամ բայն եւս միայն երկու ժամանակ ունի կամ, կամ . . .

կամ եւ է՞մ բայերը լրանում են լինէմ էական բայով:

դ. Ունիմ, ունիս, ունի, ունինք, ունիք, ունին: Ունէի, ունէիր, ունէր. ունէինք, ունէիք, ունէին:

Լրանում է սենէնալ բայով:

դ. Կարենամ, կարենաս, կարենայ. կարենանք, կարենաք, կարենան:

Կարենայի, կարենայիր, կարենար. կարենայինք, կարենայիք, կարենային: *

Կարացի, կարացիր, կարաց. կարացինք, կարացիք, կարացին:

Լրանում է հարդարանալ բայով:

ե. Գիտեմ, գիտես, գիտէ. գիտենք, գիտէք, գիտեն:

Գիտէի, գիտէիր, գիտէր. գիտէինք, գիտէիք, գիտէին:

Լրանում է գիտէնալ բայով:

242. Պակասաւոր բայերը խոնարհեցէք և մնացած ժամանակները իրանց լրացուցիչ բայերով լրացրէք:

243. Լրացուցիչ բայերն առանձին խոնարհեցէք:

Միադէմ բայեր.

§ 206. Կան բայեր, որոնք միայն եղակի երրորդ գէմքով են գործ ածվում, ուստի եւ միադէմ են կոչվում: Միադէմ բայերն իսկապէս երկու մասից են բաղկացած. Երկրորդ մասն էական բայն է, իսկ առաջին մասը գոյական կամ ածական անուան միտք ունի: — Պէտք է, արժան է, հարկ է, ամօթ

*) Ստորագրասական եղանակի ապառնի և անկատար ժամանակներն են իսկապէս, որ սահմանական եղանակի ներկայ և անկատար ժամանակի տեղ են բանում:

է, հնար է, փայել է, հերիք է, բաւ է, անկ է...

§ 207. Միադէմ բայի մօտ ենթական որդական հոլովով է գրվում: Երբեմն միադէմ բայը գործ է ածվում առանց ենթակայի եւ կազմում է անդէմ նախադասութիւն:

§ 208. Դիմաւոր բայերից եւս ոմանք գործ են ածվում որպէս միադէմ բայեր եւ անդէմ նախադասութիւն են կազմում: —Ասում են՝ կըսուի, խօսուեցաւ, մթնում է, ցրտեց...

244. Հետևեալ նախադասութիւններում գտէք ենթական: —Զեզ պէտք է աճիլ, իսկ ինձ—մեղմանալ: Մեղք է դրաբարել անմեղ մարդկանց: Ամօթ է, երբ մարդ չի կատարում իւր խօսուումը: Հարչ է, որ որդիքը պատուեն իրանց ծնողներին: Քեզ արժան է գիտենալ քո օգուտն ու վնասը: Որուն հնար է, պէտք է շրջանկատութիւն պահպանել, որ թշնամին մէջը չմտնի: Զերիք է մեզ, որքան խարուեցանք, բաւ է, որքան դաւաճանեցին մեր հաւատարմութիւնը: Առաջ է, սուստ ասողի տունը կրակ ընկաւ, ոչ ոք չհաւատաց: Կըւու՞ի թէ Հայերը մեծ ջանք են անում մտաւորապէս յառաջ գնալու: Խօսուեցաւ ու վհռուեցաւ, որ առաջ մենք գնանք, յետոյ դուք:

Բացասական բայեր.

§ 209. Երբ որ բայերը գործողութեան կատարումը ժխտում են, չէ ասելով են մի բան կատարում, կոչվում են բացասական բայեր: —Զեմ կարդում, լխօսեցայ, լրախանամ, ի՞ գրիք:

Բացասական բայերին հակառակ, միւս բայերը կոչվում են հաստատական:

§ 210. Բացասական բայերի խոնարհումը փոքր ինչ տարբեր է հաստատական բայերի խոնարհումից:

Օրինակ՝ Այսէի:

Սահմանական եղանակ.

Ներկայ՝ չեմ լսում, չես լսում, չի լսում.

չենք լսում, չէք լսում, չեն լսում:

Անկար. չէի լսում, չէիր լսում, չէր լսում:

չէինք լսում, չէիք լսում, չէին լսում:

Կատարեալ՝ չսեցի, չսեցիր, չսեց.

Չսեցինք, չսեցիք, չսեցին:

Վաղարհապ. չեմ լսել, չես լսել, չի լսել.

չենք լսել, չէք լսել, չեն լսել:

Գերակար. չէի լսել, չէիր լսել, չէր լսել:

չէինք լսել, չէիք լսել, չէին լսել:

Ապառնէ՝ չեմ լսիլ, չես լսիլ, չի լսիլ.

չենք լսիլ, չէք լսիլ, չեն լսիլ:

Պայ. առ. չէի լսիլ, չէիր լսիլ, չէր լսիլ.

չէինք լսիլ, չէիք լսիլ, չէին լսիլ:

Հրամայակ. մի լսիր, մի խօսիր, մի կարդար, մի ուրախանար: (մի լսիլ, մի խօսիլ):

մի լսէք, մի խօսէք, մի կարդաք, մի ուրախանաք:

Սարարտան. որ, թէ, եթէ

Աղառնէ՝ չսեմ, չսես, չսէ.

զմենք, զմէք, զմեն:

Անկարար. զմէի, զմէիր, զմէր.

զմէինք, զմէիք, զմէին:

Դերայ՝ զմել, զմող, զմած, զմելու:

§ 211. Այս պատկերից երեւում է՝

ա. Էական բայով կազմուած ժամանակները
և մասնիկն ընդունում են էական բայի վերայ եւ
սովորապէս նախադաս են վարդում: — Խօսում է ։ . .

բ. Սահմանականի ապառնին շինվում է ան-
խորի անորոշ գերբայից, միայն առաջին լծորդու-
թեան բայերի վերջաւորութիւնը եւս իլ է դառ-
նում: Գրել—չեմ գրիլ. գործել—չեմ գործիլ...

գ. Պայմանական ապառնին եւս շինվում է
անորոշ գերբայից էական բայի անկատար ժամա-
նակի բացասական ձեւով: — Կրգրէի-չէի գրիլ.
Կըկարդայի—չէի կարդալ . . .

դ. Էական բայի եզակի երրորդ դէմքը—չէ—
միւս բայերի հետ կցուելիս փոխվում է վ՝ չի խօ-
սում, չի գրում, չի կարդում, չի ուրախանում: թէ
եւ կան եւ անփոփոխ գրողներ՝ չէ խօսում, չէ
գրում, չէ կարդում, չէ ուրախանում:

ե. Մնացած ժամանակները իրանց վերայ առ-
նում են և մասնիկը անխորի:

զ. Հրամայական եղանակը և մասնիկի փոխա-
րէն առնում է մ' բացասական մասնիկը:

245. Խոնարհեցէք՝ հաւեւ, հանչւ, հունչւ ներգործական-

ները և աղաւեւ, դարրապէւ չէզոքները բացասական ձևով:

246. Խոնարհեցէք նոյնալէս՝ աշխարհէւ, հանչնէւ, բնակնէւ,
հաւանէւ, նայիւ բացասական ձևով:

247. Խոնարհեցէք նմանապէս երրորդ լծորդութեան
բայերը՝ հաւեւ, հանչնէւ, հանչիւ, ինդաւ:

248. Խոնարհեցէք չորրորդ լծորդութեան բայերը՝
հաւանաւ, ինդանաւ, կախենաւ, ուրախանաւ, շըրմանաւ:

249. Խոնարհեցէք հետեւեալ կրաւորական բայերը՝
սիրուիլ, կարդացուիլ, մոռացուիլ:

250. Խոնարհեցէք հետեւեալ զարտուղի բայերը՝ բուս-
նիլ, անցնիլ, դիալիլ, կաչիլ. . .

§ 212. Կամ, էմ, անիմ, գիտէմ բայերի բացա-
սականը առանձին կազմութիւն ունի՝

ա. Զկամ, չկաս, չկայ.

չկանք, չկաք, չկան:

չկայի, չկայիր, չկար.

չկայինք, չկայիք, չկային:

բ. չեմ, չես, չէ.

չենք, չէք, չեն:

չէի, չէիր, չէր.

չէինք, չէիք, չէին:

շ. չունիմ, չունիս, չունի.

չունինք, չունիք, չունին:

չունէիմ, չունէիս, չունէի.

չունէինք, չունէիք, չունէին:

թ. չգիտեմ, չգիտես, չգիտէ.

չգիտենք, չգիտէք, չգիտեն:

չգիտէի, չգիտէիր, չգիտէր.

չգիտէինք, չգիտէիք, չգիտէին:

Անցողական բայեր.

ա. Կարդալ խօսիլ ուտել, մոռանալ:

բ. Կարդ—ացնել խօս—եցնել ուտ—ացնել մոռ—
ացնել:

գ. Կարդալ տալ, խօսիլ տալ, ուտել տալ, մոռա—
նալ տալ:

դ. Կարդացնել տալ, խօսեցնել տալ, ուտացնել
տալ, մոռացնել տալ:

§ 213. Առաջին տողի բայերը ներգործական են:
Երկրորդ տողի բայերը շինուած են նոյն ներ—
գործականներից եւ ցոյց են տալիս, որ գործողու—
թիւնը ոչ թէ ներգործում է իւր մօտաւոր առար—
կային անմիջապէս, այլ անցնում է նորան օտարի
ձեռքով։ Այդ տեսակ բայերը կոչվում են անցողական։

Անցողական բայերը շինվում են ներգործական
բայերից, նոցա արմատին կցելով ցընել կամ ցնել
մասնիկը և կամ է յօդակապով։ *

§ 214. Անցողական բայերի տեղ կարող են
գործ ածուիլ ներգործական բայերը առաջի հետ։ —
Կարդալ տալ, խօսիլ տալ, ուտել տալ, մոռանալ
տալ։

*) Է յօդակապը սովորապէս և է լծորդութեան բա—
յերի համար է զործ դնում, թէն նորա ևս կարող ին և
յօդակապ առնել։

Իսկ եթէ առաջ բայը աւելացնենք անցողական
բայերին, կրկին անցողական կ'ստանանք — Կարդա—
ցնել տալ, խօսեցնել տալ, ուտացնել տալ, մոռա—
ցնել տալ։

ա. Մեռնիլ, յոգնիլ, կորչիլ, թռչիլ։

բ. Մեռ—ցնել, յոգն—եցնել, կոր—ցնել, թռ—ցնել։

§ 215. Ցնել մասնիկը, որ ներգործական բայը
անցողական է գարձնում, չէզոք բայերի վերայ
գրուելով՝ նոցա պարզ ներգործական է շինում։
Ֆուցնել յանեցնել կարցնել, նուցնել ոչ թէ ուրիշի
ձեռքով, այլ անմիջապէս։

Ս.յս ներգործականներն անցողական անելու
համար, պէտք է մօտը դնել առաջ։ — Մեռցնել
տալ, յոգնեցնել տալ, կորցնել տալ, թռցնել տալ։

§ 216. Անցողական բայերը խոնարհվում են
առաջին լծորդութեան պէս, միայն կատարեալ ժա—
մանակում ցնել և մասնիկի և տառը փոխվում է ք.
Կարդացրի, կարդացրիր, կարդացրեց... իսկ հրա—
մայականը և տառը փոխելուց զատ՝ վերջը «— է
ունենում։ կարդացրու։

251. Հետեւեալ ներգործական բայերը անցողական
շինեցէք և խոնարհեցէք։ — Հաւաստալ, խմել, հասնիլ, մո—
ռանալ, հաւանիլ, ճանաչել, կարդալ, սովորիլ, ուտել. . .

252. Միևնոյն բայերը տալ բայով կրկին անցողա—
կան շինեցէք և խոնարհեցէք։

Հետեւեալ չէզոք բայերը շինեցէք ներգործական և

խոնարհեցէ՛ք՝ մեռնիլ, յոգնիլ, կորչիլ, խաղալ, կպչիլ, թըռչիլ, մեծանալ, լաւանալ, հիւանդանալ:

253. Միմնոյն բայերը անցողական շինեցէ՛ք և խոնարհեցէ՛ք:

254. Հետեւեալ բայերը անցողական շինեցէ՛ք՝ չափել, ազդել, աղաչել, այրել, բռնել, կարել, հրամայել, յանդիմանել, սերմել, հալածել, վոնտել:

255. Խոնարհեցէ՛ք հետեւեալ բարդ բայերը՝ ներս մըտնել, դուրս գնալ, վազ տալ, վրայ տալ, որս անել, գործածել, հոգս քաշել, ջանք անել:

Դերբայ.

§ 217. Դերբայերը չորս են (113) ա. անորոշ գերբայ կամ աներեւոյժ, բ. ներկայ գերբայ կամ ընդունելութիւն ներկայ, գ. անցեալ գերբայ, դ. ապառնի գերբայ:

§ 218. Անորոշ գերբայը վարկում է ա. իբրեւ բայ եւ բ. իբրեւ գոյական անուն:

Նա բայ է, երբ մօտը մի ուրիշ գիմաւոր բայ ունի եւ նախադասութեան մէջ լրացնողի կամ ենթակայի պաշտօն չի կատարում, այլ ինքն ունենում է իրան լրացնողը կամ ենթական. ուզում եմ գնալ եւ վարժապետիցս ներողութիւն ինդրեւ այսինքն՝ ուզում եմ գնամ եւ վարժապետիցս ներողութիւն ինդրեւ:

§ 219. Անորոշ գերբայը գոյական է, երբ նախադասութեան մէջ կատարում է լրացնողի, որոշողի եւ ենթակայի պաշտօն: Այդ դիսպուածում

նա՝ որպէս հասարակ գոյական անուն, հոլովկում է երկրորդ հոլովման պէս՝ կարդալ, կարդալու, կարդալուց, կարդալով, կարդալում:

ա. Կարդալը լաւ բան է. (ի՞նչը)՝ ընթերցանութիւնը (ենթակայ):

բ. Կարդալս գիրքս գեղեցիկ է՝ ընթերցանութեամն (որոշող):

գ. Գիրքը կարդալս է որոշուած՝ ընթերցանութեամն (արակ. եւ լրացնող):

դ. Կարդալս մարդս բաւականութիւն է ստանում՝ ընթերցանութիւնից (երկ. լրացնող):

ե. Կարդալս մենք բաւականութիւն ենք տալիս մեր հարցասիրութեանը՝ ընթերցանութեամբ (երկ. լրացնող):

զ. Կարդալս ոմանք բաւականութիւն չեն գտնում՝ ընթերցանութիւնում (լրացնող):

§ 220. Ներկայ գերբայը գործ է ածվում իբրեւ բայ եւ իբրեւ ածական անուն:

Իբրեւ բայ ներկայ գերբայը գործ է ածվում միայն էական բայի օգնութեամբ (տես վարը): Իբրեւ ածական անուն՝ նա միշտ գրվում է գոյականի մօտ եւ պարզ ածականի պէս նորան որոշում է, հետեւապէս կարող է յօդ առնել եւ հոլովուիլ իբրեւ սովորական ածական անուն: Խոտ հայոց մշակները գերանդիներն առան եւ մտան մարգարետինը՝ լուսութիւնը գերանդիներն առան մարգարետինը...:

§ 221. Անցեալ գերբայը երկու վերջաւորու-

թիւն ունի՝ ած—եւ (երբեմն ետև): Եւ վերջաւորութիւնը դիմաւոր բայերից անբաժան է գործ ածվում, կազմելով վաղակատար եւ գերակատար ժամանակները, ինչպէս տեսանք բայերի մէջ: Ետև վերջաւորութիւնը գրաբարի մնացորդ է եւ աշխարհաբարում գործ է ածվում որպէս հասարակ ածական՝ սիրեցեալ, մեռեալ, նորուցեալ, հանգուցեալ (երբեմն միայն իբրեւ գերբայ՝ «ունեալ այն օրից—սկսած այն օրից»):

§ 222. Ած անցեալը երեք կերպ գործածութիւն ունի.

ա. Նա բայ է, երբ նախադասութեան մէջ ենթակայի, որոշողի կամ լրացնողի պաշտօն չէ կատարում, այլ ինքը առնում է ենթակայ կամ լրացնող.—Հայոց զօրքը Տղմուտ գէտն անցած՝ պատերազմն սկսեցին—անցան եւ «ո՞՛չին»: Կէս օրից մէկ ժամ մնացած՝ մենք քաղաք հասանք—մէկ ժամ էր մնացել: Զարը հնասած՝ ոտներդ մի հանիր—մինչեւ չես հասել:

բ. Ած անցեալը, եթէ մօտը որեւիցէ գոյական ունի, որին որոշում է, ածական է՝ իտրացած գիրքս, կէրպէ հացս, խճած ջուրս, աշխատած փողս... .

գ. Ած անցեալը՝ եթէ հոլովլում է եւնախագասութեան մէջ կատարում է լրացնողի, ենթակայի եւ պատկ. ցոյց տուող որոշողի պաշտօն, գոյական է:

ա. Գրածը ջնջուեցաւ—գրութիւնը (ենթակայ):

բ. Գրածի կէսն անգիր արեց—գրութեան (ուրոշող):

գ. Ուշը ու միտքը Գրածին էր նուիրել—գրութեանը (լրացնող):

դ. Գրածը չհաւանեց վարժապետը—գրութիւնը (լրացնող):

ե. Գրածից արտագրեցի մի երես—գրութիւնից (լրացնող):

զ. Գրածով հաստատեց իր ասածը—գրութիւնով (լրացնող):

է. Գրածով մի ջնջուած տառ ըկար—գրութիւնում (լրացնող):

§ 223. Ապառնի գերբայը (լու) անորոշ գերբայի սեռականն է եւ միշտ ածական որոշողի պաշտօն է կատարում՝ «ունեալ հաց, խճած ջուր, իտրացած գիրք...».

Երբեմն չու ապառնու տեղ գործ է ածվում լի վերջաւորութեամբ ապառնի, առաւելապէս կոչական բառերում՝ սիրելի եղբայր, պատուելի՝ բարեկամ: . .

Լի երբեմն գործ է ածվում, երբ գոյականը զօրութեամբ է գրուած. այդ ժամանակ նա յօդ է առնում եւ յոգնակի թուով է վարվում՝ ասելիւթ ասաւ (ասելու բաներդ): Դու քո անելին արա:

§ 224. Ապառնի գերբայը գիմաւոր բայի տեղ գրուած պիտի համարուի, եթէ նպատակ ցոյց տուող պարագայականի պաշտօն լինի կատարած՝

ես գնում եմ կարդալու (որ կարգամ): Զինորաը գնաց ձուկը սրալու (որ ձուկը որսայ):

§ 225. Բոլոր գերբայերը՝ բացի անորոշից, էական բայերի օգնութեամբ խոնարհվում են բոլոր ժամանակներով եւ գործ են ածվում դիմաւոր բայերի տեղ:

Կերբայերի պէս՝ էական բայերի օգնութեամբ, կարող են խոնարհուիլ եւ ածական ու գոյական անունները. գերբայերը նորանով են տարբերվում միայն, որ առանց էական բայերի էլ իրանք գործողութիւն ունին իրանց մէջ: Ահաւասիկ մի ընդհանուր օրինակ.

Սահմանական եղանակ՝

Ներկայ՝ մարդ եմ, ծոյլ եմ, գրած եմ *), գրող եմ, գրելու եմ:

Սակադար՝ մարդ էի, ծոյլ էի, գրած էի, գրող էի, գրելու էի:

Կադարեալ՝ մարդ եղայ, ծոյլ եղայ, գրած եղայ, գրող եղայ, գրելու եղայ:

Վաղակառ. մարդ եմ եղել, ծոյլ եմ եղել, գրած եմ եղել, գրող եմ եղել, գրելու եմ եղել:

*) Ի հարկէ առ՝ որպէս անցած գործողութիւն, միայն ձևով ներկայ է, իսկ գաղափարով կը մնայ անցեալ և գործ կ'ածուի փաղակատարի և գերակատարի մաքով, ինչպէս որ էր է՛ս պարզ ներկայ է, իսկ էր է՛ս պարզ ապառնի: Պայց և այնպէս աշակերտների դիւրութեան համար ամենայարմարն է այս ձեզ պահպանել, ապա թէ ոչ ժամանակ-

Գելակառ. մարդ էի եղել, ծոյլ էի եղել, գրած էի եղել, գրող էի եղել, գրելու էի եղել:

Սահմանական՝ մարդ կը մինիմ, ծոյլ կը մինիմ, գրած կը մինիմ, գրող կը մինիմ, գրելու կը մինիմ:

Պայց. առ. մարդ կը մինէի, ծոյլ կը մինէի, գրած կը մինէի, գրող կը մինէի, գրելու կը մինէի:

Համայսական՝ մարդ եղիր, ծոյլ եղիր, գրած եղիր, գրող եղիր, գրելու եղիր:

Սահմանական՝ թէ, եթէ, որ

Սահմանական՝ մարդ լինիմ, ծոյլ լինիմ, գրած լինիմ, գրող լինիմ, գրելու լինիմ:

Սահմանական՝ մարդ լինէի, ծոյլ լինէի, գրած լինէի, մինէի, գրող լինէի, գրելու լինէի:

Գերբայ՝ մարդ լինիլ, ծոյլ լինիլ, գրած լինիլ, գրող լինիլ, գրելու լինիլ:

Ների այնպիսի խառնաշփոթութիւն կ'ստանանք, որից մանուկներին հանել անհնարին կը մինի: Մեր առաջարկած ձեռով բաւական է աշակերտներին բացատրել, օրինակ, որ անցեալ գերբայի ներկան ու անկատարը դիմաւոր բայի փաղակատարի և գերակատարի ոյժ ունին, իսկ ապառնի գերբայի ներկան և անկատարը դիմաւոր բայի ապառնիի և պայմանականի մտքով են վարդում: Վերլուծել պէտք է՝ էր-է է՛ս անցեալ գերբայ է՛ս էական բայի ներկայ ժամանակով. էր-էր-է՛ս ապառնի գերբայ է՛ս էական բայի անկատար ժամանակով:

Մակրայ.

§ 226. Մակրայներն՝ իրանց կազմութեանը նայելով, երկու են՝ բուն մակրայներ եւ բանի միւս մասունքներից առնօւած մակրայներ:

Բուն մակրայները կամ պարզ բառեր են՝ «պէտ», «աճախ», «Հ-ը», «Երբ...» կամ առանձին մակրայակերտ մասնիկներով շինուած տժանցական բառեր՝ «մեծապէտ», «քաջաբար», «առաստօդէն», «որտանց», «սաստին», «բնաւ», «կամայ», «ակամայ...»

257. Հետեւեալ օրինակների մէջ գտէ՛ք բուն մակրայները և իրանց նշանակութեան համեմատ առանձին կարգերի բաժանեցէ՛ք, համեմայն § 111-ի:

Խնչուե գեղեցիկ էր երգում սպասակը: Հաշէւ միջնել էր և ան՝ մեզ առողին տանջում է ցուրան ու անձրել: Կալանաւորներին բանի բանար տարան: Հայ նախարարներին բանաբար գերի վարեցին: Կրակը շուր հանգաւ և հըրշչները յետ գնացին: Ես գիտեմ հայեն, առուելին և վրացիւր կարուալ և զրել: Մէկրէ կանգնեցէ՛ք, պաշտպանուեցէ՛ք ու շաբար և համար անձնատուք մի լինիք: Յաղթուելուց յետոյ համայ-ահամայ տուփնք մեր զինքերը: Կամաց զնացէ՛ք, մենք էլ շուրուվ կըդանք: Այսւեն չնկատեցի, թէ զուեւն էրի: Նա բուրութիւն չէր պատրաստել դասերը: Բառչէլ կարծում, թէ զու իսուառ կըմուանաս անելիքդ: Եւ առուելի շար պէտք է աշխատեր: Եւ չէր սփոփում ինձ բնութեան գեղեցկութիւնը: Մէայնակ կանգնած էր նա սարի վերայ:

258. Այստի մոյն գիտեմ, որ յէտ առածը յէտ պէտք է տանք: Յաճախ մարդս այնպիսի բաներ է լսում, որ առուելի դժուա-

լանում է հաւատալ: Մայրն սրէո թուղթ էր զրում իւր որդուն, որ անիւստաբուք քրէնէ մոռացել էր նրան: Յաճախ մէտէնի, այն նեղութիւնից յետոյ, արեգակը կըմաւարի: Քշնամիքը յանէուշն ներս թափուեցան և նորան սպանեցին: Մէժապէտ զգուշացէ՛ք ուրիշին դատելիս: Աստուած յուրաքանչիւս խօսեցաւ Մավսէսի հետ: Մավսէսը սահման զարկեց և ապաստից անձագուէս առատ ջուր բղիսից: Վերջապէտ Քրայէլացիք հասան քանանացոց երկիրը: Հայր և որդի ընդունելուր խօսում էին: Հայրը Երանէն իրատում էր որդուն: Բամբասամէքը Նորաշար խոցոտում է մարդուս սիրուը: Անշահը կըմաւանանք, եթէ զնաւ անդամ հաջեանցէ պատմէք ձեր մտադրութիւնը: Ես որո՞նց ցանկանում էի ձեզ ուեսնել: Ուշադիր մանուկը առեւէ սիրափ լոի և ուիս խօսի: Ուշադիր ես զնում: Ուստի կըդաս, զարիք բլրուլ: Ուր պիտի զնենք մեր յոդնած գլուխը: Աշուածուած զարդարած էր, քայլ յերածուած լիքն էր ապականութեամբ:

259. Ե՞րբ էր տեսել, որ այրին ոտից զլուխ պճնուի իւր զարդերով թանկագին: Աշխատող մարդը Ջշու հաց կունենայ, երբէւ չի սովիլ: Երբէւն էի լոյս, իսկ այդու եմ խաւար: Մէրի որոտում ես, Երի ամպում ես: Մէրի հարաւային հողմի նման հնչում ես ինչու ոտար, ես ըլնում եմ զժուու: Լաւ է երբէւ, քան առաքաւ: Լաւ է ուշ, քան Երբէւ: Բժիշկը դեռ չհասած հիւանդն աշուած մեռած էր: Դուք իսկառի պնացէ՛ք: Յաճախ կիտէի: Այս այդու կարիք չունիմ: Առաջ մենք կըկարդանք, յշուոյ դուք: Նուի մտածիր և աղիսուիր: Նու և առաջ նիւթը պատրաստիր և ապա զրիր: Աստուծունախախնամութիւնը յաւիտեան պիտի թագաւորէ: Յերայ զղաց Յուլան և ատրաւ արծաթը քահանայապետին:

§ 227. Բայի բուն մակրայներից, կան շատ անուններ եւ գերանուններ, որոնք գրլում են բայի Համար եւ մակրայ են համարվում: Գոյականից առ-

Նուած մակրայները կարող են հողովուիլ եւս, միայն հողովուած գոյական մակրայները յոգնակի թւում հասարակ գոյական անուն պիտի համարուին (բացի նորեւած, օտքերգու, անցեալուրը, որոնք ու ու կական մակրայ են). օրինակ՝

Վերև գնաց—ուր գնաց՝ հայցական հողով է—
Վերևից ընկաւ—բացառական է:

Վերևուած անցաւ—գործիական է:

Վերևուածը կանգնած էր—ներգոյական է:

Վերևուէրը բոնուած են—ինչերը՝ հասարակ գոյական անուն է:

260. Հետեւալ մակրայներով նախադասութիւններ կազմեցէ՞ք:

Ներս, ներսը, ներսից, ներսում, վար, վարը, վերմիլը, *) դուրս, դուրսը, դրսից, դրսով, դրսում, առաջ առաջը, առաջեր, առաջից, առաջնից, յետե, յետեր, յետեից, յետեում, դէմը, դիմացը, դիմացից:

261. Գոյականը գերանուան հետ—Այսուեղ, այդտեղ այնտեղ, այնտեղից, այնտեղով, այնտեղում, ո՞րտեղ, ո՞րտեղից, ամէն տեղ, ամենայն տեղ, միքանի տեղուչ մի տեղ, ամէն տեղից, այստեղանց, մէջտեղը, մէջտեղից:

*) Մեղանում վար և վեր մակրայները միշտ շփոթում են միմեանց հետ, մենք ասում ենք, օրինակ, վէր էկու և վէր էլու, փոխանակ չւր էկու և վէր էլու ասելու. Եթէ շատ գժուար է վւր մակրայը գործ ածել, ասլա, կարծում ենք, վար բառի տեղ վւր գրեիս, պէտք է և տառով գոնէ գրենք (վէր), որովհետեւ սա ո, երկրարքառի կրճատումն է, ինչպէս՝ հայր—հէր, մայր—մէր, փայտ—փէտ, ուրիմն և վայր—վէր:

262. Գոյականը մենակ կամ ուրիշ բառի հետ:
Սյսօր, վաղը, երէկ, հիմակ, առաւօար, երեկոյին, հերու, անցեալ տարի, առաջ, առաջուց, մի օր, մի ժամանակ, օրով—ցերեկով, օրը կիսօրին, գիշերը, ցերեկը, ն, առաւօտանց, գիշերհանայ, շատուց, շատոնց, հնուց, վաղուց, հիմակուց, իսկզբանէ, ի յաւիտենից, յաւիտեան:

Խստիւ, սիրով, փութով, շուտով, գիւրաւ, գժուարսւ, բարտի, բարեաւ, շտապով, շտապաւ, աւելրդով, մէկանց, մէկէն տուեց սոլանեց, սրտանց, երեսանց, ժախուառնել, էջնէ կուրին բժշկեց, էքնէ անպիտան էր—Անգամ, միանգամ, միանգամից, միանգամով, միանգամայն, երկու անգամ, երկիցս, երիցս, չորիցս...

§ 228. Ածական անունների մեծագոյն մասը, եթէ բայի համար է, մակրայի պաշտօն է կատարում մենակ կամ մ մասնիկի հետ:—Բայցը մարդը էտքը էր խօսում: Փայչի մանուկը մ գոտի ուշացաւ:

263. Զուգընթացարար գրեցէ՛ք միքանի նախադասութիւններ, ուր միենոյն ածական անունը և՛ ածական մինի, և՛ մակրայ:

§ 229. Կերամնունը զանազան մասնիկների օգնութեամբ մակրայի պաշտօն է կատարում—Այսպէս, այդպէս, այնպէս, սոյնպէս, դոյնպէս, նոյնպէս, այսքան, այդքան, այնքան, սոյնքան, դոյնքան, նոյնքան, այսպիսով, այդպիսով, այնպիսով. այսուհետեւ, այնուհետեւ, սապէս, դապէս...

§ 230. Գոյական անուններից շատերը, եթէ կրկնութեամբ են գործ ածուած, կամ եթէ մի

Եւ նոյն գոյականը իւր մի հոլովի հետ է, կարող
է մակբայ լինիլ:

264. Կաթիլ—կաթիլ կաթիլ.

Ոլոռն—ոլոռն ոլոռն.

Ստէպ—ստէպ ստէպ.

Խումբ—խումբ խումբ.

Դաս—դաս դաս.

Ցից—ցից ցից.

Ոլոր—ոլոր ոլոր

Կամաց—կամաց կամաց.

Ծուռ—ծուռ ծուռ.

Տեղ—տեղ տեղ.

Ժամանակ—ժամանակ ժամանակ.

Հատ—հատ հատ.

Թիլ—թիլ թիլ.

Կարգ—կարգ կարգ.

Ոտք—ոտք ոտք ցած իջնել.

265. Օր—օրէց օր.

Ժամ—ժամ առ. ժամ.

Ժամ—ժամէ իժամ.

Մօտ—մօտէ մօտ, մօտ առ. մօտ.

Երես—երեսէ երես, երես առ. երես.

Ձեռք—ձեռքէ ձեռք.

Գուռն—գուռնէ գուռն.

Երկիր—երկիրէ երկիր.

Աշխարհ—աշխարհէ աշխարհ.

Ծայր—ծայրէ ի ծայր.

Գլուխ—գլուխէ ի գլուխ.

Պէմք—պէմացէ պէմաց.

Գար—գարէց գար.

Կէս—կիսով չափ.

Հոգի—հոգով չափ.

Տեղ—տեղն ի տեղն.

Փոխ—փոխ առ. փոխ, փոխէ փոխ.

Վազ—վազէ վազ

Ձեռք—ձեռք ձեռքի.

Կուռ—կոնարոնուկ.

Օր—օր առուր

Ցետե—ցետեէ ցետե.

Հետ—հետզհետէ.

Կոյր—կոյրզկուրայն.

Վեր—վեր ի վերոյ, վայր ի վերոյ.

Մէջ—մէջ ընդ մէջ

Դէմ—դէմ առ. դէմ.

Երես—երես առ. երես.

Քայլ—քայլ առ. քայլ.

Տուն—տունն-տուն, տունէ տուն.

Դաս—դաս առ. դաս.

Բառ—բառ առ. բառ.

Խիտ—խիտ առ. խիտ.

Հազիւ—հազիւ հազ:

266. Մէկ էլ տեսնես, օր օրի վերայ, գիշեր ցերեկ,
ըստ ամենայնի, ըստ պատշաճի, ըստ օրինի, ըստ պատահ-
ման, ըստ դիպուածին, առառաւելն, առհարկի. Էւլ+
խօսեցաւ, լուսէրէ յանձն առաւ. զուր տեղը, պարապ
տեղը ջանք կ'անես, անիրաւ տեղը դատուեցաւ, զուցէ
թէ, կարծես թէ, իցէ թէ, այն միջոցին, այն ժամին թողին
զնացին:—Քանի որ, երբոր, մինչև որ . . .

Նախագրութիւն.

§ 231. Նախագրութիւնները, իրանց կազմութեանը նպայելով, երկու են՝

ա. Բառն նախադրսութիւններ՝ համար, հետ, դէմ, չափ, պէս, առանց, մինչեւ, դէպ, իրը, իրեւ, բացի, զատ, իզատ, իվեր, իվայր, առ, հայտառակ, հանձնառ, ճշու (վերջին երեքը ածականից):

բ. Գոյակէտնից առնես-ած նախարարութիւնները, որոնք բոլորը, առանց բացառութեան, մակեայի պաշտօն էլ են կատարում. դռան առաջը, պարզապի յէտելը, վերեւ, ներքեւը, վրայ, տակը, մէջ, քոյ, դէմ:

§ 232. Բուն նախադրութիւններից՝ համայնք, հետ, լավ, պէս, դէմ, առանց, հակառակի, համեմատ, և առնում են տրական եւ սեռական հոլով՝ ինձ համար, վարժապետի համար, քեզ չափ, քո չափ, աշակերտի չափ, նորա գէմ, թշնամու գէմ, ում հակառակ, իմ հակառակ, ինձ հակառակ, հօրը հակառակ. ինձ մօտ, իմ մօտ, առանց ինձ:

Փախանակ՝ առնում է սեռական հոլով—
Տուր իմ՝ եւ քո փոխանակ:

Մինչև, դեպի առնում են հայցական հոլով՝ մինչեւ ինձ, դեպի քեզ. մինչեւ սարը, մինչեւ քաղաքը, դեպի գիւղը, դեպի առն գնացին:

իբր, իբրև գործ է ածվում ամեն հոլով-

Ներով՝ իբրեւ մարդ, իբրեւ մարդու, իբրեւ մարդուց, իբրեւ մարդով, իբրեւ մարդում:

Զար, բայի, եվել, եւսոյ, վար, եբուն, եփլուն,
նախդիրները առնում են բացառական եւ հայ-
ցական հողովներ՝ քեզնից զատ. բացի վնասից, բացի
շահից. մանկութիւնից ի վեր. սարն իվեր, ծառն
իվեր, ականջս իվեր, գետն իվայր նաւեցին, գետից
վայր նաւեցին, ծառից վայր իջան: Օրն իբուն, գե-
շերն իբուն. ձմեռն ի գլուխ անդադար աշխատում
է: Դիմել առ Աստուած...

Գոյականից առնուած նախաղքութիւնները
սեռական հոլով են առնում եւ նորա հետ էլ հո-
լովկում են՝ ծառի տակը, կտրի վերայ, իմ առաջը,
իմ առաջին, իմ առաջից, իմ առաջով, իմ առա-
ջում:

267. Գրեցէք հետեւալ նախադրութիւններով օրինակներ՝ առաջը, առաջնը, ետևը, յետևը, վերևը, ներքև, վրայ, վերայ, վրայով, տակ, մէջ, մօտ, դէմ, դիմացը, տեղը, գոյանակ, յեւածակ, միջանկ, նիստամաբ (վերջին երեքը հողոված գոյական են, որ երբեմն միայն նախադրութեան տեղ են գործ ածվուած):



I ՄԱՍՈՒԻՆՔ ԲԱՆԻ:—Գոյական անուն, գոյական անուան սեռը՝ յատուկ և հասարակ գոյականներ. գոյական անուան թիւը. հաւաքական գոյական անուն: Ածական. որակական և յարաբերական ածականներ. Թուական անուն. բացարձակ, դասաւորական, բայլսական, մասնական թուականներ: Դերանուն, դերանունների տեսակները՝ էական, ցուցական, ստացական, հարցական, յարաբերական և անորոշ: Բայ. բայերի սեռը, եղանակը, ժամանակը, թիւը և դէմքը: Դերբայ. գերբայի ահսակները: Մակրայ և նորա ահսակները: Նախադրութիւն: Շաղկաս: Զայնարկութիւն (երես 1—28):

II ԲԱՌԵԿԱԶՄՈՒԹԻՒՆ: Բառերի արմատը և վերջաւորութիւնը. նախայար և վերջայար մասնիկներ. նախատիպ և ածանցական բառեր. պարզ և բարդ բառեր. կորուսման և փոփոխման կանոնները (երես 29—41):

III ՄԱՍՈՒՅՑ-ԲԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ: Գոյական անունների փոփոխութիւնները—հոլով և հոլովմոնք. ուղղական և հայցական, սեռական և տրական, բացառական, գործիական և նեղոյական հոլովները. կանոնաւոր հոլովմանց պատկերը. անլիանոն հոլովմոնք. անուան յօդը. անունների հոլով մը որոշեալ յօդով: Ածական անուան հոլովմը: Թուակաս անունների հոլովմումը: Դերանունների փոփոխութիւնը՝ անձնական դերանունների հոլովմումը, ցուցական և ստացական դերանուններ. դերանուանական յօդ. անորոշ դերանուան հոլովմումը: Բայի փոփոխութիւնը. խոնարհումն և լծորդութիւն. էական բայերի խոնարհումը. սուաջին լծորդութիւն. երկրորդ լծորդութիւն. երրորդ լծորդութիւն. չորրորդ լծորդութիւն. կրաւորական բայերի խոնարհումը. անկանոն խոնարհումնք. պակասաւոր բայեր. միադէմ բայեր. բացասական բայեր. անցողական բայեր: Դերբայի փոփոխութիւնը: Մակրայի փոփոխութիւնը: Նախադրութիւն: (երես 41—104):

ՀԱՅ

Բ

ՀԱՅ

3131

«Ազգային գրադարան



NL0061918

